



Ստրասբուրգ, 2007 թվականի հուլիսի 5

ACFC/44DOC(2012)001 rev

**ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

ԹԻՎ 3 ԹԵՄԱՏԻԿ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԼԵՐՎԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ**

Ընդունվել է 2012 թվականի մայիսի 24-ին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՄԱՍ II ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ	9
1. Լեզու եւ անհատական ինքնություն	9
1.1. Ներառական մոտեցում	9
1.2. Ընտրության ազատություն, բազմակի եւ իրավիճակային պատկանելիություն	10
1.3. Տվյալների հավաքում	12
2. Փոքրամասնության ինքնության հիմնական տարրերի՝ այդ թվում լեզվի զարգացում	13
ՄԱՍ III ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ	16
1. Օրենքի առջեւ հավասարություն եւ օրենքի հավասար պաշտպանություն, կյանքի բոլոր բնագավառներում իրական հավասարություն	16
2. Հանդուրժողականություն, միջմշակութային երկխոսություն եւ խտրականության բացառում	18
2.1. Մշակութային եւ լեզվական բազմազանության արտացոլում	19
2.2. Մեծամասնության եւ փոքրամասնության լեզուների կրողների միջեւ փոխհարաբերությունները 20	19
ՄԱՍ IV ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ	23
1. Հանրային հատվածի լրատվամիջոցներ	23
2. Մասնավոր հատվածի լրատվամիջոցներ	25
3. Տպագիր մամուլ	26
4. Լրատվամիջոցների տեխնոլոգիական առաջընթացը եւ դրա ազդեցությունը փոքրամասնությունների վրա	27
5. Կինոյի/երաժշտության ոլորտ եւ փոքրամասնությունների լեզուներ	28
ՄԱՍ V ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ	29
1. Հրապարակայնորեն, վարչական կառույցներում եւ դատական համակարգում փոքրամասնությունների լեզուների գործածություն	29
1.1. Պաշտոնական լեզվի մասին օրենքներ կամ «պետական լեզվի մասին» օրենքներ	29
1.2. Վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուների գործածությունը այն տարածքներում, որտեղ ավանդաբար կամ զգալի թվաքանակով ազգային փոքրամասնություններ են բնակվում	31

1.3 Քրեական վարույթի ընթացքում տեղեկացված լինելու իրավունք	33
1.4 Փոքրամասնությունների լեզուների այբուբեն	34
2. Փոքրամասնությունների լեզուների արտահայտման ձեվեր՝ անձնական անուններ, վայրերի անուններ եվ տեղագրական նշաններ	34
2.1. Անձնական անուններ եւ հայրանուններ	34
2.2. Հանրության համար տեսանելի մասնավոր բնույթի տեղեկություններ	36
2.3. Հասարակական վայրերում տեղադրված ցուցանակներ	36
ՄԱՍ VI ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ	38
1. Կրթության հասանելիություն	38
2. Փոքրամասնության լեզու եվ այդ լեզվով դասավանդելու եվ սովորելու բավարար հնարավորություններ	39
2.1. Բաց եւ ներառական մոտեցում փոքրամասնությունների լեզուներին կրթության ոլորտում	39
2.2. Կրթական իրավունքների լիարժեք իրականացմանը օժանդակող միջոցներ	43
2.3 Կրթության ոլորտում մեծամասնության եւ փոքրամասնությունների լեզուների միջեւ հավասարակշռություն	45
2.4 Լեզվական բազմազանության եւ միջմշակութային կրթության խթանում	46
ՄԱՍ VII ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	48
1. Լեզվական իրավունքներ եվ մշակութային, սոցիալական եվ տնտեսական կյանքում գործուն մասնակցություն	49
2. Լեզվական իրավունքներ եվ հանրային քաղաքականությանը գործուն մասնակցություն	51
ՄԱՍ VIII ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	54

ՄԱՍ 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հաշվի առնելով լեզվական իրավունքների կենտրոնական նշանակությունը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց բոլոր իրավունքների արդյունավետ պաշտպանության հարցում եւ լեզվի կարեւորությունը՝ որպես անհատական եւ կոլեկտիվ ինքնության արտահայտման միջոցի՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի հարցերով խորհրդատվական կոմիտեն իր երրորդ թեմատիկ մեկնաբանությունը նվիրում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց լեզվական իրավունքներին:

2. Շրջանակային կոնվենցիայով պետություններից պահանջվում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար ապահովել լիակատար եւ իրական հավասարություն տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ մշակութային կյանքի բոլոր բնագավառներում: Սա նշանակում է օրենքի ուժով եւ օրենքի առջեւ հավասար պաշտպանության իրավունք եւ էթնիկ ծագման, ինչպես նաեւ այլ հիմքերով՝ այդ թվում լեզվի, խտրականության բոլոր ձեւերից պաշտպանված լինելու իրավունք: Լիակատար եւ իրական հավասարությունը նաեւ ենթադրում է, որ իշխանությունները պետք է հատուկ միջոցներ ձեռնարկեն անցյալի կամ կառուցվածքային անհավասարությունները հաղթահարելու համար եւ ապահովեն, որ բոլոր անձինք, այդ թվում ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք, ունենան հավասար հնարավորություններ: Բացի դրանից՝ Շրջանակային կոնվենցիայով Կողմ հանդիսացող պետությունների համար սահմանվում է պարտավորություն՝ «ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար ապահովել իրենց մշակույթը պահպանելու եւ զարգացնելու եւ իրենց ինքնության էական տարրերը, մասնավորապես՝ կրոնը, լեզուն, ավանդույթները եւ մշակութային ժառանգությունը պահպանելու համար անհրաժեշտ պայմանները»:¹

3. Չնայած Շրջանակային կոնվենցիայով պաշտպանվում են ազգային փոքրամասնությունների պատկանող առանձին անձանց իրավունքները, այնուամենայնիվ, որոշ իրավունքների իրականացումը տեղի է ունենում կոլեկտիվ մակարդակում:² Իրականում՝ որոշ իրավունքներ, օրինակ իրապարակորեն փոքրամասնության լեզվով խոսելու իրավունքը, կարող են արդյունավետ կերպով իրականացվել միայն մյուսների հետ խմբերով: Թեպետ փոքրամասնությունների՝ գրեթե բոլոր իրավունքները փոխկապակցված են, սա հատկապես

¹ Տե՛ս Շրջանակային կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին պարբերությունը

² Տե՛ս նաեւ Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը. «Ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք, ինչպես անհատապես, այնպես էլ մյուսների հետ խմբերով, կարող են իրականացնել իրավունքներ եւ օգտվել ազատություններից, որոնք բխում են սույն շրջանակային Կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից»: Իրավունքների եւ ազատությունների համատեղ իրականացումը 1995 թվականի փետրվարի H(1995)010 բացատրական զեկույցի համաձայն տարբերվում է կոլեկտիվ իրավունքների գաղափարից:

արդիական է լեզվական իրավունքների դեպքում: Քանի որ լեզուն արտահայտման եւ հաղորդակցության հիմնական ձեւ է, ուստի լեզվական իրավունքների պաշտպանությունը պետք է երաշխավորվի այլ իրավունքների հետ փոխկապակցված, այդ թվում՝ կրթության իրավունքը, զանգվածային լրատվամիջոցների հասանելիության եւ մշակութային, սոցիալական եւ տնտեսական կյանքում, ինչպես նաեւ հանրային քաղաքականությանը մասնակցելու իրավունքները:

4. Սույն Մեկնաբանությունը նախ եւ առաջ անդրադառնում է անձի ինքնության կամ ինքնությունների պաշտպանության հարցում լեզվական իրավունքների կարեւորությանը: (II մաս – Շրջանակային կոնվենցիայի 3–րդ եւ 5–րդ հոդվածներ): III մասը ուսումնասիրում է լեզվական իրավունքները՝ խտրականության բացառման եւ լիակատար եւ իրական հավասարության ապահովման հավասարապես էական սկզբունքների առնչությամբ: Մեկնաբանության IV–VII մասերն, այնուհետեւ, անդրադառնում են մամուլին, լեզուների՝ հասարակական եւ անձնական նպատակներով օգտագործմանը, կրթությանը եւ գործուն մասնակցությանը վերաբերող լեզվական իրավունքների համապատասխան խմբերին (Շրջանակային կոնվենցիայի 9-17–րդ հոդվածներ):

5. Հաջորդելով Խորհրդատվական կոմիտեի կողմից մինչ այժմ ընդունված եզրակացությունների մանրամասն համեմատական եւ վերլուծական ուսումնասիրությանը՝ սույն Մեկնաբանությամբ ներկայացվում են լեզվական իրավունքների վերաբերյալ հիմնական եզրահանգումները, որոնք ընդգրկվել են առանձին երկրների համար առաջին, երկրորդ եւ երրորդ պարբերաշրջանի եզրակացություններում:³ Հետեւաբար, այն հիմնված է Կողմ հանդիսացող պետություններում 1998 թվականից սկսած Շրջանակային կոնվենցիայի իրականացման մանրամասն դիտանցման վրա եւ հենվում է Խորհրդատվական կոմիտեի կողմից նախկինում ընդունված երկու թեմատիկ մեկնաբանությունների վրա՝ Շրջանակային կոնվենցիայի համաձայն 2006 թվականի մարտի 2–ի կրթության վերաբերյալ առաջին թեմատիկ մեկնաբանությունը⁴ եւ 2008 թվականի փետրվարի 27–ի մշակութային, սոցիալական եւ տնտեսական կյանքին, ինչպես նաեւ հանրային քաղաքականության բնագավառում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց գործուն մասնակցության վերաբերյալ երկրորդ թեմատիկ

³ Սույն Մեկնաբանության մեջ հաճախակի հղում է կատարվում առանձին երկրների համար առաջին, երկրորդ եւ երրորդ պարբերաշրջանի եզրակացություններին, որոնցում որոշակի եզրահանգումները կատարվել են: Այդ հղումներն ունեն միայն բացատրական բնույթ: Փորձ է կատարվել ծավալուն ձեռնարկ ներկայացնելու անդամ պետություններում կատարված եզրահանգումները: Սակայն, քանի որ լեզվական իրավունքներն ամենուր խնդիր չեն հանդիսանում, ուստի 39 Կողմ հանդիսացող պետություններից հղում է կատարվում միայն 34–ին:

⁴ Տե՛ս Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի համաձայն ACFC առաջին մեկնաբանությունը կրթության մասին՝ ընդունված 2008 թվականի փետրվարի 27–ին, ACFC/25D0C(2006)002, www.coe.int/minorities:

մեկնաբանությունը:⁵ Արժեքավոր ներդրում են ունեցել նաև ազգային փոքրամասնությունների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները⁶ գիտնականները եւ այլ անձինք, ովքեր մասնակցել են նաև վերջնական մշակման գործընթացի շրջանակներում տեղի ունեցած լայնածավալ խորհրդակցություններին:

6. Մեկնաբանության մեջ գործածված տերմինները համապատասխանում են մինչև այժմ խորհրդատվական կոմիտեի կողմից իր աշխատանքում ընդունված ճկուն մոտեցմանը: Սույն Մեկնաբանության մեջ գործածված «փոքրամասնության լեզու» եզրույթը, այսպիսով, նշանակում է անդամ պետությունների կողմից գործածված տարբեր եզրույթներից ցանկացածը, օրինակ՝ «ազգային փոքրամասնության լեզու», «ազգային փոքրամասնության կողմից օգտագործվող լեզու», «ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց լեզու», «բնիկ լեզու» կամ «մայրենի լեզու»:⁷ Սա չի նշանակում, որ իշխանությունները պաշտոնապես ճանաչել են այդ լեզուն՝ որպես «փոքրամասնության լեզու»:

7. Աճող շարժունությունը եւ միգրացիան այն ժամանակակից սոցիալական երեւույթներ են, որոնք նույնպես բազմազան են դարձրել հաղորդակցության միջոցները: Արդյունքում, սոցիալ-լեզվաբանական մոտեցումները լեզվի գաղափարին, որը երկար ժամանակ համարվել է սերտորեն կապված այնպիսի ստատիկ հասկացությունների հետ, ինչպիսիք են տարածքը եւ որեւէ խմբին պատկանելիությունը, նույնպես փոփոխվում են: Շրջանակային կոնվենցիան հիմնվում է անհատի իրավունքների մոտեցման վրա: Հետեւաբար դրա հիմքում ընկած չէ լեզուն, կամ լեզվով խոսող համայնքը, այլ՝ տվյալ լեզվով խոսող անձը: Նրանց հաղորդակցության ունակությունները, որոնք կարող են ընդգրկել մի շարք լեզվական միջոցներ (լեզվի ստանդարտ եւ ոչ ստանդարտ ձեւեր, բարբառներ, եւ այլն), հաճախ զարգանում են ամբողջ կյանքի ընթացքում՝ շփման եւ շարժունության արդյունքում:

8. Թեեւ պետությունները շարունակում են էական դեր խաղալ լեզուների գործածությունը կարգավորող իրավական ռեժիմը սահմանելու գործում, թափ են հավաքում այլ կառույցներ ինչպես օրինակ՝ տեղական, տարածաշրջանային կամ անդրազգային մարմինները, որտեղ լեզվի գործածության եւ վարկի վրա ազդեցություն են ունենում տարբեր դերակատարներ: :

⁵ Տե՛ս ACFC երկրորդ մեկնաբանությունը մշակութային, սոցիալական եւ տնտեսական կյանքում, ինչպես նաև հանրային քաղաքականության բնագավառում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց գործուն մասնակցության մասին՝ ընդունված 2008 թվականի մայիսի 5-ին, ACFC//31DOC(2008)001, www.coe.int/minorities:

⁶ «Փոքրամասնության ներկայացուցիչ» եզրույթը տեքստում իրավական իմաստ չունի, այլ վերաբերում է պաշտպաններին կամ խոսնակներին, ովքեր հանդես են եկել իրենց տեսակետներն արտահայտելու նպատակով:

⁷ «Մայրենի լեզու» եզրույթը անպայմանորեն էթնիկ երանգ չունի, այլ նշանակում է լեզու, որն ազատորեն ընտրվել է տանը խոսելու համար՝ ինի դա փոքրամասնության, թե պաշտոնական լեզու:

Լեզվակիրների տարբեր խմբերի միջև ուժի անհավասար հարաբերակցությունը կարող է հանգեցնել սոցիալական հիերարխիաների, ինչը նաև կարող է արտացոլվել լեզվի գործածության սովորույթներում եւ լեզուների վերաբերյալ քաղաքական քննարկումներում: Սա ազդում է այն բանի վրա, թե ինչպես են որոշակի լեզուներ կրողները ընկալվում այլոց կողմից եւ, որոշ չափով, թե ինչպես են նրանք ընկալում իրենք իրենց: Ուստի, անհատի եւ հասարակության մակարդակներում լեզվական միջոցների արժեւորմանն ուղղված լեզվական ռազմավարությունները նույնպես պետք է անդրադառնան լեզվի բնագավառում եւ հասարակության մեջ հիերարխիայի հարցին եւ հասարակությունում լիակատար մասնակցություն ցուցաբերելու անհավասար հնարավորությունների խնդրին:

9. Ազգային փոքրամասնությունների եւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ ըստ Շրջանակային կոնվենցիայում սահմանվածի, հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանության անքակտելի մասը միջազգային մակարդակում:⁸ Ուստի, փոքրամասնության իր լեզուն ազատորեն եւ անարգել, անձնական կյանքում եւ հրապարակորեն, բանավոր եւ գրավոր ձեւով գործածելու՝ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը այնպես, ինչպես ամրագրված է Շրջանակային կոնվենցիայի 10.1 հոդվածում, նույնպես մարդու իրավունքների միջազգային ստանդարտների մաս է կազմում:

10. Շրջանակային կոնվենցիայից բացի, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց լեզվական իրավունքների պաշտպանության համար կարեւոր են այլ միջազգային փաստաթղթեր, եւ դրանք հաշվի են առնվել Խորհրդատվական կոմիտեի կողմից սույն Մեկնաբանությունը կազմելիս: Այդ փաստաթղթերը ներառում են ինչպես պարտադիր իրավական ուժ ունեցող ստանդարտներ, այնպես էլ առաջարկներ եւ ուղեցույցեր: Պարտադիր իրավական ուժ ունեցող ստանդարտների թվին են պատկանում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայում եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքում, ինչպես նաև փոփոխված Եվրոպական սոցիալական խարտիայում տեղ գտած ստանդարտները : Բացի դրանից Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների մասին Օսլոյի առաջարկները, որոնք հրատարակվել է Ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ գերագույն հանձնակատարի կողմից, ինչպես նաև նրա այլ առաջարկների՝ լեզվին վերաբերող հատվածները, ինչպես օրինակ Ազգային փոքրամասնությունների կրթության իրավունքների վերաբերյալ Հաագայի առաջարկները, մանրամասնորեն հաշվի են առնվել Խորհրդատվական կոմիտեի կողմից: Լեզվական իրավունքների բնագավառում նորմերի մշակմանը նպաստել են նաև ՄԱԿ–ի մի շարք

⁸ Տե՛ս Շրջանակային կոնվենցիայի 1-ին հոդվածը:

փաստաթղթեր, մասնավորապես հաշվի են առնվել «Ազգային կամ էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների մասին» հռչակագիրը, ինչպես նաև Փոքրամասնությունների հարցերով աշխատանքային խմբի՝ հռչակագրի վերաբերյալ մեկնաբանությունները, «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագիրը եւ ՄԱԿ–ի Փոքրամասնությունների հարցերով ֆորումի համապատասխան առաջարկները՝ հատկապես կապված կրթության եւ մասնակցության հետ: Ավելի ընդհանուր մակարդակում հաշվի են առնվել նաև «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիան, «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը եւ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան: Խորհրդատվական կոմիտեն հաշվի է առել նաև Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) փորձը, ինչպես նաև համապատասխան դեպքերում՝ լեզվական իրավունքների մասին ԵՄ կանոնագիրքը:

11. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան հատուկ նշանակություն ունի լեզվի ոլորտում: Շեշտադրելով, որ պետությունները պարտավոր են պաշտպանել եւ խթանել տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները՝ որպես մշակութային ժառանգության մաս, այլ ոչ թե լեզվական իրավունքներ շնորհել այդ լեզուների կրողներին՝ խարտիան մեծ կարեւորության յուրահատուկ միջազգային փաստաթուղթ է այս բնագավառում եւ լրացնում է սույն Շրջանակային կոնվենցիան: Շրջանակային կոնվենցիայի եւ խարտիայի դրույթների միջեւ զգալի նմանություններ կարելի է գտնել, մասնավորապես, խարտիայի III մասի մանրամասն շարադրված դրույթներում: Սակայն, III մասը վերաբերում է միայն այն փոքրամասնությունների լեզուներին, որոնք Կողմ հանդիսացող պետությունը նշել է խարտիայի վավերացման ժամանակ: Ավելին, Կողմ հանդիսացող պետությունները հայեցողական իրավունք ունեն որոշելու, թե յուրաքանչյուր լեզվի դեպքում ինչ պարտավորություններ են ստանձնելու III մասում սահմանվածներից, որոնք հաճախ ավելի համապարփակ են, քան Շրջանակային կոնվենցիայում ընդգրկված լեզվական իրավունքները: Թեեւ այս երկու փաստաթղթերի կիրառման բնույթը եւ գործողության շրջանակը կարող են այսպիսով տարբերվել, Շրջանակային կոնվենցիայի՝ անհատի իրավունքների վրա հիմնված մոտեցումը եւ խարտիայի՝ մշակույթի պահպանությանը եւ զարգացման առավել բազմակողմանի մոտեցումը ամրապնդում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց լեզվական իրավունքների պաշտպանության մասով ընդհանուր իրավական դաշտը:

12. Սույն Մեկնաբանությունը նախատեսված է ծառայելու որպես համապարփակ գործիք Շրջանակային կոնվենցիայի Կողմ հանդիսացող պետությունների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, քաղաքացիական հասարակության եւ գիտական

շրջանակների համար: Լեզվի տարբեր նշանակությունները ներկայացնելով, մի կողմից որպես փոքրամասնությունների՝ կարելի է տարբերակիչ հատկանիշ, մյուս կողմից՝ որպես բազմամշակութային եւ տարալեզու բազմաբնույթ հասարակությունների լիակատար եւ իրական հավասարության եւ ինտեգրման զարգացման համար կարելի գործիք՝ սույն Մեկնաբանությունը նպատակ է հետապնդում արտացոլել այն հիմնական խնդիրները, որոնց ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք այսօր բախվում են իրենց լեզվական իրավունքների առնչությամբ: Որպես այդպիսին, այն պետք է ընկալվի որպես արդիական փաստաթուղթ, որի բացատրությունը մշակվում է Շրջանակային կոնվենցիայի դիտանցման գործընթացին զուգահեռ:

ՄԱՍ II ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

13. Լեզուն անհատական եւ կոլեկտիվ ինքնության կարելի բաղադրիչներից է: Ազգային փոքրամասնությունների պատկանող շատ անձանց համար լեզուն իրենց՝ որպես փոքրամասնություն ինքնության եւ նույնականացման հիմնական գործոններից մեկն է: Սակայն, լեզուն, ինչպես եւ ինքնությունը, ստատիկ չէ, այլ զարգանում է մարդու կյանքի ընթացքում: Սեփական (փոքրամասնության լեզվի (լեզուների) գործածման իրավունքի լիակատար եւ իրական երաշխիքը ենթադրում է, որ իշխանությունները թույլ են տալիս անձանց ազատ նույնականացումը լեզվի միջոցով եւ ձեռնպահ են մնում անհատական ինքնությունը խիստ լեզվական կատեգորիաներով սահմանափակելուց: Շրջանակային կոնվենցիայի 3.1 հոդվածի համաձայն՝ պետք է հարգել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի ընտրությունը՝ ազատորեն որոշելու այդ փոքրամասնության անդամ համարվել կամ ոչ: Սույն գլուխը վերաբերում է լեզվական իրավունքների այն խմբին, որը կապված է անձնական/անհատական ինքնության եւ ինքնությունների եւ դրանց հետ առնչվող իրավունքների հետ:

1. ԼԵԶՈՒ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

1.1. Ներառական մոտեցում

14. Շրջանակային կոնվենցիայի Կողմ հանդիսացող պետություններն ունեն առանձին անձանց նկատմամբ դրա կիրառելիությունը որոշելու հայեցողական իրավունք: Այնուամենայնիվ, որպես ազգային կամ լեզվական փոքրամասնություն դասակարգումը պետք է չհանգեցնի նման խմբերի նկատմամբ վերաբերմունքի կամայական կամ չարդարացված տարբերակման:⁹

⁹ Տե՛ս, օրինակ՝ Լեհաստանի վերաբերյալ երկրորդ եզրակացությունը, Ալբանիայի վերաբերյալ առաջին եզրակացությունը:

15. Կողմ հանդիսացող մի շարք պետություններում որոշ խմբեր դիմել են որպես ազգային փոքրամասնություն ճանաչվելու եւ Շրջանակային կոնվենցիայի պաշտպանությունից օգտվելու խնդրանքով: Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է համապատասխան իշխանություններին ցուցաբերել, բաց եւ ներառական մոտեցում եւ դիտարկել սույն Շրջանակային կոնվենցիայով չկարգավորվող խմբերին պաշտպանության տակ առնելու հարցը:¹⁰ Առանձին անձանց նկատմամբ կիրառման շրջանակը, հարկ եղած դեպքում, պետք է ներառի նաեւ քաղաքացի չհանդիսացող անձանց, հատկապես, եթե քաղաքացիության հիմքով կոնվենցիայի գործողության շրջանակից դուրս մնալը կարող է հանգեցնել չարդարացված եւ կամայական տարբերակումների, ինչպես օրինակ երբ կոնվենցիայի գործողության շրջանակից դուրս են մնում ազգային փոքրամասնությունների պատկանող՝ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք մշտապես բնակվում են որոշակի տարածքում:¹¹ Սա համապատասխանում է ավելի լայն՝ Եվրոպայի մակարդակով ձեռնարկվող քայլերին՝ մշակելու առավել տարբերակված մոտեցում ազգային փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում քաղաքացիության չափանիշի կիրառությանը:¹²

1.2. Ընտրության ազատություն, բազմակի եւ իրավիճակային պատկանելիություն

13. Շրջանակային կոնվենցիայի 3.1 հոդվածով սահմանվում է, որ «ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ ունի որպես այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք եւ այդ ընտրության արդյունքում կամ այդ ընտրության հետ կապված իրավունքների իրականացման արդյունքում տվյալ անձը պետք է չհայտնվի անբարենպաստ վիճակում»: Ազատ ինքնանույնականացման սկզբունքի պահպանումը, ուստի, չափազանց կարեւոր նշանակություն ունի Շրջանակային կոնվենցիայի մեկնաբանման եւ իրականացման գործում:¹³ Թեեւ լեզուն ընդհանուր առմամբ ընկալվում է որպես ինքնությունը մատնանշող էական գործոն, լեզվական կարողությունները կամ դրանց բացակայությունը, ինչպես նաեւ լեզվի զուտ օգտագործումը պետք է ինքնաբերաբար չկապվի որոշակի խմբին անձի պատկանելիության հետ:¹⁴

¹⁰ Բոսնիայի եւ Հերցեգովինայի վերաբերյալ առաջին եզրակացություն, Խորվաթիայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

¹¹ Տե՛ս, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ երկրորդ եզրակացությունը, Խորվաթիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը:

¹² Տե՛ս նաեւ «Քաղաքացի չհանդիսացող անձանց եւ փոքրամասնությունների իրավունքների մասին» 2007 թվականի հունվարի 18-ի Վենետիկի հանձնաժողովի զեկույցը, CDL-AD(2007)001՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից 2006 թվականի դեկտեմբերի 15-16-ի 69-րդ լիագումար նստաշրջանում:

¹³ Տե՛ս նաեւ ACFC առաջին թեմատիկ մեկնաբանությունը կրթության մասին:

¹⁴ Թեեւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք հաճախ կարող են միանալ որեւէ փոքրամասնության՝ ելնելով լեզվական չափանիշներից, սույն մեկնաբանության մեջ չի քննարկվում լեզվական փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքները, այլ՝ ազգային փոքրամասնությունների

Եվ հակառակը՝ լեզվական կամ մշակութային իրավունքներից օգտվելը պետք է չպայմանավորվի անձի՝ իր փոքրամասնության լեզվին տիրապետելու փաստով եւ ոչ էլ այդ անձի՝ այլ լեզուներին տիրապետելու հմտություններով:¹⁵

17. Փոքրամասնական որեւէ խմբին պատկանելիությունը անձնական ընտրության խնդիր է, որը սակայն պետք է հիմնվի անձի ինքնությանը համապատասխան օբյեկտիվ չափանիշների վրա:16 Որոշակի խմբի պատկանելիության ընտրությունը պետք է չհանգեցնի որեւէ անբարենպաստ իրավիճակի: Պատշաճ ուշադրություն պետք է դարձվի ընտրության ազատությանը, հատկապես երբ փոքրամասնությանը պատկանելու մասին հայտարարվում է բացահայտ, երբ այդ պատկանելիությունը չի փոփոխվում երկար ժամանակի ընթացքում եւ երբ, օրինակ, նախապես հաստատված լեզվական կատեգորիաներից մեկին լեզվական պատկանելիության մասին հայտարարելուց հրաժարվելը հանգեցնում է որոշակի քաղաքական կամ քաղաքացիական իրավունքներից զրկման:17 Տեսանելի կամ լեզվական հատկանիշների հիման վրա կամ ենթադրաբար որոշակի խմբի հետ անձանց ասոցիացումը, առանց վերջիններիս համաձայնության, հակասում է սույն Շրջանակային կոնվենցիային:¹⁸

18. Ավելին, անձը կարող է իրեն նույնականացնել մի քանի խմբերի հետ: Բազմակի պատկանելիության երեւոյթը, իրականում, շատ տարածված է՝ կապված, օրինակ՝ խառը ամուսնությունների կամ պետությունների իրավահաջորդության դեպքերի հետ: Անձը կարող է նաեւ իրեն տարբեր կերպ նույնականացնել տարբեր նպատակներից ելնելով՝ կախված որոշակի իրավիճակում նույնականացման հիմնավորվածությունից: Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ ինքնանույնականացման սկզբունքը, ինչպես սահմանված է Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդվածում, նաեւ երաշխավորում է բազմակի պատկանելիության հնարավորությունը: Սա նշանակում է, որ սկզբունքորեն, անձը կարող է լեզվական իրավունքներ պահանջել՝ կապված փոքրամասնությունների մի քանի լեզուների հետ, եթե Շրջանակային կոնվենցիայի համապատասխան հոդվածներում սահմանված համապատասխան պայմանները, ինչպես օրինակ պահանջի եւ (կամ) ավանդական բնակության հետ կապված, բավարարվում են:¹⁹

պատկանող անձանց լեզվական իրավունքները:

¹⁵ Շվեդիայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն: Ուկրաինայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

¹⁶ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա եւ բացատրական զեկույց, H(1995)010, 1995 թվականի փետրվար, 35-րդ պարբերություն:

¹⁷ Իտալիայի վերաբերյալ առաջին եզրակացություն: Կիպրոսի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

¹⁸ Գերմանիայի վերաբերյալ առաջին եզրակացություն: Սլովակիայի Հանրապետության վերաբերյալ առաջին եզրակացություն:

¹⁹ Հայաստանի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

1.3. Տվյալների հավաքում

19. Խորհրդատվական կոմիտեն շեշտում է վստահելի, տարանջատված տվյալների հավաքման կարեւորությունը՝ տարբեր խմբերի պատկանող անձանց լեզվական կարիքները հարգելուն եւ իրավունքները խթանելուն ուղղված ռազմավարություններ արդյունավետորեն մշակելու, իրականացնելու եւ գնահատելու նպատակով: Նման տվյալների հավաքումը, պահպանումը եւ օգտագործումը պետք է լիովին համապատասխանի անձնական տվյալների պաշտպանության գործող ստանդարտներին:²⁰ Կարետր է նշել, որ պետություններին խրախուսվում է բնակչության մարդահամարից բացի տվյալներ հավաքել այլ աղբյուրներից, ինչպես օրինակ՝ տնային տնտեսությունների կամ դպրոցներում անցկացվող ֆորմալ եւ ոչ ֆորմալ հարցումները, ինչպես նաեւ անկախ հետազոտությունները: Հավաքված տվյալները մեկնաբանելիս՝ իշխանությունները պետք է գիտակցեն, որ անցյալի փորձը եւ խտրականության ենթարկվելու վախը կարող են դրդել անձանց թաքցնել իրենց լեզվական պատկանելիությունը եւ ինքնությունը:²¹ Ուստի, լեզվական քաղաքականություն մշակելիս քանակական տվյալները պետք է համարել վստահելի տեղեկություններ ձեռք բերելու միակ միջոց, այլ պետք է դրանք լրացնել սոցիոլոգիական, էթնոգրաֆիկ եւ այլ գիտական որակական ուսումնասիրություններով, հատկապես, երբ, միտումները ցույց են տալիս, որ որոշակի լեզվի կրողների թիվը նվազում է, կամ երբ վիճակագրական տվյալները տարբերվում են փոքրամասնության ներկայացուցիչների հաշվարկներից:

20. Որպես էթնիկ պատկանելիությունը մատնացույց անող գործոն՝ լեզուն ներառվել է բնակչության մարդահամարի շրջանակում 19-րդ դարում: Ելնելով այն ենթադրությունից, որ յուրաքանչյուր անձի համար գոյություն ունի դոմինանտ լեզու, բոլոր նրանք, ովքեր նշում էին մեկից ավելի լեզուներ, մարդահամարի նպատակներով, այնուամենայնիվ, սովորաբար համարվում էին միալեզու: Սակայն, որպեսզի լեզվական ռազմավարությունները կարողանան արձագանքել ներկայիս մարտահրավերներին, դրանք պետք է ճանաչեն անհատական բազմալեզվությունը, ինչպես նաեւ ժամանակակից հասարակությունների սոցիալական եւ լեզվական բազմազանությունը: Փոքրամասնությունների լեզուների կրողները կարող են հաճախ խոսել պաշտոնական լեզվով (լեզուներով) եւ ավելի գրագետ տիրապետել այդ լեզվին: Սակայն, սա պետք է չխանգարի նրանց իրենց նույնականացնել նաեւ փոքրամասնության լեզվի բնիկ կրողների հետ: Փոքրամասնության լեզվի կրողներին լեզվական մեկ կատեգորիայով չսահմանափակելու համար,

²⁰ Տե՛ս, օրինակ՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (ETS թիվ 108) եւ վիճակագրական նպատակներով հավաքագրված եւ մշակված անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ Նախարարների կոմիտեի Rec(97)18 առաջարկը :

²¹ Խորվաթիայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

ներառյալ՝ վիճակագրական նպատակներով, հարցաշարերը պետք է հարցվողներին հնարավորություն տան նշելու մեկից ավելի լեզուներ: Ընտրովի հարցերը եւ այլընտրանքային պատասխանների բաց ցանկերը՝ որեւէ կատեգորիային միանալ չպարտավորեցնող, չափազանց կարեւոր են երաշխավորելու համար, որ արդյունքներն արտացոլեն անհատի ընտրությունը:²²

21. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին տվյալներ հավաքել՝ ինքնանույնականացման սկզբունքին եւ Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի առաջարկներին խիստ համապատասխան ձեւով:²³ Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին որոշակի նախաձեռնություններով հանդես գալ՝ մարդահամար անցկացնող անձանց թվում փոքրամասնությունների պատկանող եւ փոքրամասնությունների համապատասխան լեզուներով խոսող անձանց ներգրավելու համար: Բացի դրանից, հարցաշարերը եւ տվյալների հավաքման այլ գործիքները պետք է թարգմանել փոքրամասնությունների լեզուներով, եւ նախապատրաստական փուլերում փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցել՝ տվյալների հավաքման ժամանակ օգտագործվող մեթոդների մասին, այդ թվում՝ անձի էթնիկ կամ լեզվական պատկանելիության հարցերի վերաբերյալ: Այս սկզբունքները կիրառելի են տվյալների հավաքման բոլոր մեթոդների նկատմամբ, ներառյալ՝ նրանք, որոնք վերաբերում են հանրային ծառայությունների տրամադրմանը, սոցիալական հարցումներին, ինչպես նաեւ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ այլ համապատասխան հետազոտություններին, այդ թվում՝ մասնավոր ոլորտում:

2. ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԻԵՐԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ԼԵՉԿԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

22. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ իշխանությունները, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ սերտ համագործակցության պայմաններում, պետք է մշակեն ներդաշնակ եւ համապարփակ ռազմավարություններ այնպիսի պայմանների ստեղծմանը նպաստելու համար, որոնք անհրաժեշտ են փոքրամասնությունների պատկանող անձանց՝ իրենց մշակույթը պահպանելու եւ զարգացնելու, եւ իրենց ինքնության հիմնական տարրերը՝ ներառյալ լեզուն, պահպանելու համար: Լեզվի եւ մշակույթի պահպանման միջեւ կապը

²² Տե՛ս, օրինակ՝ Ֆինլանդիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը, որտեղ բնակչության գրանցամատյանում նշված լեզվական պատկանելիությունը (մեկ լեզվին) որոշիչ եղավ հասանելի ցերեկային բուժօգնության տրամադրման լեզվի առումով:

²³ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, 2010 թվականի բնակչության մարդահամարի եւ բնակարանային քաղաքականության վերաբերյալ Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի առաջարկությունները: Կազմված է Եվրոպական համայնքների վիճակագրության գրասենյակի հետ համագործակցությամբ (ԵՎՐԱՍՏԱՏ): ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, Ժնև (2006 թ.)՝ լեզվի մասին 430-436-րդ պարբերություններ:

շեշտվել է Խորհրդատվական կոմիտեի կողմից առանձին երկրների համար մի շարք եզրակացություններում, մասնավորապես՝ թվով փոքր փոքրամասնությունների եւ բնիկ ժողովուրդների առումով, որոնց ավանդույթները եւ մշակույթները պահպանվել են, այլ գործոնների թվում՝ իրենց լեզուների շարունակական օգտագործման շնորհիվ:²⁴ Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ իրենց լեզուն օգտագործելու իրավունքները, ուստի, պետք է հստակ սահմանված լինեն եւ պատշաճ կերպով պաշտպանված օրենսդրությամբ, որի կիրառումը կանոնավոր կերպով պետք է դիտանցվի:²⁵

23. Իշխանությունները, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցելով, պետք է շարունակեն աջակցություն ցուցաբերել փոքրամասնությունների մշակույթների եւ լեզուների պահպանմանը եւ զարգացմանը նպատակաուղղված ծրագրերին եւ պետք է աջակցությունը հատկացնեն՝ ըստ տարբեր խմբերի կարիքների՝ արդար եւ թափանցիկ ընթացակարգերի համաձայն:²⁶ Բացի դրանից՝ պետք է լսելի լինեն եւ ֆինանսական հատկացումների մասին որոշումներ կայացնելիս գործուն կերպով հաշվի առնվեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մտահոգությունները՝ կապված իրենց որոշակի ինքնությունը եւ մշակույթը պահպանելու եւ զարգացնելու իրավունքի հետ:²⁷ Ազգային փոքրամասնությունների մշակութային գործունեության հետ կապված ծրագրերը եւ նախագծերը, հնարավորության դեպքում, պետք է իրականացվեն փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավմամբ եւ հիմնավորումներ պետք է ներկայացվեն այն դեպքերի համար, երբ փոքրամասնությունների միավորումների կամ խորհրդատվական մարմինների առաջարկները չեն ընդունվում:

24. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ասիմիլյացիան կանխարգելելու համար անհրաժեշտ է ոչ միայն ձեռնպահ մնալ այնպիսի քաղաքականություններից, որոնք հստակորեն նպատակաուղղված են հիմնական հասարակության հետ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ասիմիլյացիային:²⁸ Այն նաեւ ենթադրում է որոշակի ակտիվ գործողություններ, ինչպես նշված է Շրջանակային կոնվենցիայի 5.1 հոդվածում, «նպաստելու համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրենց մշակույթը պահպանելու եւ զարգացնելու եւ իրենց ինքնության հիմնական տարրերը պահպանելու համար» այդ թվում՝ լեզուն: Ինչ

²⁴ Տե՛ս, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ երրորդ եզրակացությունը (սահմանափակ օգտագործման համար):

²⁵ Միացյալ Թագավորության վերաբերյալ երրորդ եզրակացություն. Շվեյցարիայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

²⁶ Հայաստանի վերաբերյալ երրորդ եզրակացություն. Կիպրոսի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

²⁷ Տե՛ս նաեւ ACFC երկրորդ մեկնաբանությունը գործուն մասնակցության մասին :

²⁸ Նորվեգիայի վերաբերյալ առաջին եզրակացություն:

վերաբերում է թվով ավելի փոքր փոքրամասնություններին, մասնավորապես, այս պարտավորությունը պահանջում է ակտիվորեն զարգացնել եւ խրախուսել փոքրամասնությունների լեզուների գործածումը եւ ստեղծել ընդհանուր միջավայր, որը նպաստում է այդ լեզուների օգտագործմանը՝ կանխելու հասարակական կյանքից դրանց անհետացումը: Թեեւ ասիմիլյացիան կարող է հանդիսանալ կամավոր հիմունքներով անհատական գործընթաց, դրան հաճախ նախորդում է մեծամասնություն եւ փոքրամասնություն կազմող բնակչության միջեւ մշակութային, սոցիալական կամ քաղաքական անհավասարություն, որը այնուհետեւ ստիպում է ազգային փոքրամասնության պատկանող անձանց համաձայնել ասիմիլացվելուն:

25. Ինտեգրացումը, ի տարբերություն ասիմիլյացիայի, համարվում է իրավաչափ նպատակ, որին նպաստում են թե՛ մեծամասնության եւ թե՛ փոքրամասնության մշակույթները: Այս համատեքստում այն հասկացվում է որպես սոցիալական համախմբման գործընթաց, որը պատշաճորեն ընդունում է բազմազանությունը եւ միեւնոյն ժամանակ հասարակության բոլոր անդամների մոտ զարգացնում է պատկանելիության դրական զգացում: Փոքրամասնական խմբերին պատկանող անձանց համար իրենց մշակույթը պահպանելու եւ զարգացնելու, ինչպես նաեւ իրենց համապատասխան ինքնությունները հաստատելու համար բարենպաստ պայմանների ստեղծումն, այսպիսով, ինտեգրված հասարակության համար չափազանց կարեւոր է համարվում:²⁹ Որպես երկկողմանի գործընթաց՝ ինտեգրացումը երկու կողմերից էլ պահանջում է ճանաչում եւ հարգանք, եւ հաճախ կարող է փոփոխությունների հանգեցնել թե՛ մեծամասնության, եւ թե՛ փոքրամասնության մշակույթներում: Սա ենթադրում է մեծամասնություն կազմող բնակչության՝ լայնախոհ մոտեցումը եւ փոխվելու պատրաստակամությունը, որպեսզի նրանք կարողանան ողջունել իրենց մշակույթի հարստացումը փոքրամասնությունների մշակույթների ազդեցության արդյունքում:

²⁹ Բուլղարիայի վերաբերյալ առաջին եզրակացություն: Դանիայի վերաբերյալ առաջին եզրակացություն: Ֆինլանդիայի վերաբերյալ առաջին եզրակացություն:

ՄԱՍ III ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

26. Շրջանակային կոնվենցիայի 3.2 հոդվածի համաձայն, կոնվենցիայում ընդգրկված իրավունքները կարող են իրականացվել անհատապես կամ մյուսների հետ խմբերով: Թեև Շրջանակային կոնվենցիայով երաշխավորվող փոքրամասնությունների իրավունքները կոլեկտիվ իրավունքներ չեն համարվում, որոշ իրավունքներ, ներառյալ մասնավորապես լեզվական իրավունքները, ունեն կոլեկտիվ նշանակություն: Բացի դրանից, քանի որ «մյուսների հետ խմբերով» եզրույթը կարող է ներառել նաև այլ փոքրամասնությունների անդամներին կամ մեծամասնություն կազմող բնակչությանը, ուստի այդ իրավունքների իրականացումը ունի միջմշակութային համատեքստ, որը ենթադրում է հասարակության մեջ հավասարության եւ հանդուրժողականության ընդհանուր մթնոլորտ (4-րդ եւ 6-րդ հոդվածներ): Լեզվական իրավունքների այս որոշակի սոցիալական նշանակությունը, որը հենվում է խտրականության բացառման սկզբունքի իրականացման եւ իրական հավասարության խթանման վրա, վերլուծվում է սույն գլխում:

1. ՕՐԵՆՔԻ ԱՈՋԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՀԱՎԱՍԱՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՅԱՆՔԻ ԲՈԼՈՐ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

27. Սույն Մեկնաբանության մյուս բաժիններում քննարկված սկզբունքներից շատերը վերաբերում են Շրջանակային կոնվենցիայի 4-րդ հոդվածում զետեղված օրենքի առջեւ հավասարության, օրենքի հավասար պաշտպանության եւ կյանքի բոլոր բնագավառներում իրական հավասարության սկզբունքների իրականացմանը: Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է Կողմ հանդիսացող բոլոր պետություններին ստեղծել ազգային փոքրամասնությունների պաշտպանությանն առնչվող հստակ օրենսդրական դաշտ, որը բացի իրազեկելուց այն մասին, որ իշխանությունները պարտավորվել են պաշտպանել եւ զարգացնել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքները, նաև կհանգեցնի իրական հավասարության խթանմանը նպատակաուղղված հատուկ դրույթների մշակման: 4.2 հոդվածը պարզաբանում է, որ հավասարության սկզբունքը չի ենթադրում նույնատեսակ վերաբերմունք եւ մոտեցում բոլոր լեզուներին եւ իրավիճակներին: Հակառակը, հավասարությունը խթանելու միջոցները պետք է նպատակաուղղված լինեն փոքրամասնությունների տարբեր լեզուների կրողների հատուկ կարիքների բավարարմանը: Թվով ավելի փոքր փոքրամասնությունների լեզուների կրողների համար կարող են անհրաժեշտ լինել առանձին դրույթներ՝ ուղղված հասարակական կյանքում լեզվի վերականգնումը ապահովելուն, մինչդեռ այլ՝ փոքրամասնությունների առավել տարածված լեզուների դեպքում կարող են պահանջվել

զարգացման ուրիշ մեթոդներ:

28. Պետությունները կարող են կիրառել մի շարք մեթոդներ հավասարությունը խթանելու եւ հավասարության վերաբերյալ օրենսդրության կատարումը վերահսկելու համար, այդ թվում՝ խտրականության դեմ պայքարող մարմինների, օմբուդսմանի կամ այլ մասնագիտացված ինստիտուտների ստեղծումը: Ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք պետք է ունենան իրենց իրավունքների, խտրականության դեմ պայքարող մարմինների աշխատանքի եւ ցանկացած տեսակի խտրականության դեմ, այդ թվում՝ խտրականության անուղղակի ձեւերի, ինչպես նաեւ բազմակի խտրականության դեպքերի, իրավունքների պաշտպանության իրենց հասանելի պաշտպանական միջոցների մասին տեղեկատվության մատչելիության իրավունք, հնարավորության դեպքում՝ սեփական լեզվով:

29. Բացի դրանից, Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ օրենքի առջեւ հավասար պաշտպանություն ձեռք բերելու համար Կողմ հանդիսացող բոլոր պետություններում խտրական վերաբերմունքը նույնպես պետք է համարվի օրենքով պատժելի , եւ կիրառվեն պատժամիջոցներ: Քրեական օրենսդրությունը պետք է ներառի դրույթներ, որոնք հստակ կերպով կսահմանեն, որ լեզվական, մշակութային, էթնիկ պատկանելիության կամ կրոնական հիմքերով խտրական բնույթի շարժառիթները պետք է հաշվի առնվեն դատարանների կողմից՝ որպես ծանրացուցիչ հանգամանքներ բոլոր տեսակի հանցագործությունների համար:³⁰ Ատելության քարոզչությունը եւ էթնիկ, մշակութային, լեզվական կամ կրոնական ինքնության հիմքով ցանկացած տեսակի թշնամանք հրահրելը պետք է ներառվի քրեական իրավունքի դրույթներում՝ նման հանցագործությունների համար համարժեք պատժամիջոցների ապահովման նպատակով:

30. Խորհրդատվական կոմիտեն հաճախ նկատել է խոցելի խմբերին, ինչպես օրինակ՝ գնչուական համայնքին, պատկանող անձանց հանդեպ կանխակալ վերաբերմունքի եւ խտրականության որոշակի դրսեւորումներ: Նման խտրականության դեմ պայքարելու գործում օգնություն տրամադրելու նպատակով պետք է կանոնավոր կերպով մշակվեն, իրականացվեն եւ դիտանցվեն հատուկ միջոցներ խոցելի խմբերին պատկանող անձանց լիակատար եւ իրական հավասարությունը նպաստելու համար՝ տվյալ խմբերի ներկայացուցիչների հետ սերտ համագործակցության պայմաններում: Քանի որ լիակատար եւ իրական հավասարությունից օգտվելու արգելքները սովորաբար չեն սահմանափակվում լեզվի բնագավառով, ուստի Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ է անում խոցելի խմբերի, ինչպես օրինակ գնչուների նկատմամբ կարծրատիպերի քարոզչության, խտրական վերաբերմունքի եւ փաստացի անհավասարության խնդիրները համապարփակ ձեւով լուծելու կյանքի բոլոր բնագավառներում՝

³⁰ Տե՛ս այլ եզրակացությունների շարքում՝ Ալբանիայի վերաբերյալ առաջին եզրակացությունը:

փորձելով փոխել սոցիալական վերաբերմունքը այդ խմբերի նկատմամբ: Նման միջոցները կարող են ներառել, օրինակ՝ գնչուերենի գործածության խթանումը՝ ըստ անհրաժեշտության:

31. Կողմ հանդիսացող որոշ պետությունների կողմից սահմանված՝ պետական համակարգում աշխատելու հնարավորություն կամ որոշ դեպքերում քաղաքացիություն ստանալու համար՝ լեզվին ներկայացվող պահանջները կարող են անհամաչափ խոչընդոտ հանդիսանալ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար հավասար հնարավորություններից օգտվելու առումով եւ, հետեւաբար, կարող են ունենալ անուղղակի խտրական ազդեցություն: Քայլեր պետք է ձեռնարկվեն ապահովելու համար, որ նման պահանջները մշակվեն եւ կիրառվեն ոչ խտրական եւ թափանցիկ եղանակով եւ ներառեն դրանց պարբերական վերանայման եւ գնահատման մեխանիզմներ, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար հավասար հնարավորությունների վրա ազդեցության տեսանկյունից: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար պաշտոնական լեզվի (լեզուների)՝ որակյալ վերապատրաստման ծրագրերի հասանելիությունը կարող է օգտակար գործիք լինել անհավասարությունները նվազեցնելու եւ իրական հավասարություն խթանելու համար:³¹

2. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

32. Շրջանակային կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառելի է Կողմ հանդիսացող պետության տարածքում ապրող բոլոր անձանց նկատմամբ: Այս դրույթը վերաբերում է հասարակությանը՝ որպես մեկ ամբողջության, պահանջելով որդեգրել այնպիսի քաղաքականություններ, որոնք արտացոլում եւ խթանում են բազմազանությունը, վերացնում են արգելքները եւ խրախուսում են տարբեր խմբերի պատկանող անձանց միջեւ շփումները եւ համագործակցությունը, մասնավորապես, կրթության, մշակույթի եւ զանգվածային լրատվամիջոցների ոլորտում: Հանդուրժողականության եւ փոխըմբռնման մթնոլորտ ձեւավորելու ու ցանկացած տեսակի խտրականության դեմ պայքարելու պարտավորությունն, ուստի, հիմք է հանդիսանում լեզվական բոլոր իրավունքների համար: Հետեւաբար, Շրջանակային կոնվենցիայի՝ անհատի երկլեզվության կամ բազմալեզվության ընդհանուր ոգուն համապատասխան,³² Խորհրդատվական կոմիտեի աշխատանքը հենվում է բազմալեզվության առավելությունների հանդուրժողականության եւ հասարակության մեջ բազմազանության հարգանքի նպատակով բազմալեզու լինելու

³¹ Լատվիայի վերաբերյալ առաջին եզրակացություն:

³² Տե՛ս Առաջին թեմատիկ մեկնաբանությունը կրթության մասին, 2.1.2 մաս:

արտոնությունների ճանաչման եւ գնահատման վրա:

33. Լեզվական քաղաքականությունը պետք է ապահովի, որ տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող բոլոր լեզուները հանրային հարթակում լսելի եւ տեսանելի լինեն այնպես, որ յուրաքանչյուր անձ տեղյակ լինի հասարակության բազմալեզու բնույթի մասին եւ ճանաչի իրեն՝ որպես այդ հասարակության մի մաս: Ավելի քիչ գործածվող լեզուների նկատմամբ հարգանք ձեռավորելու նպատակով՝ լեզվական քաղաքականությամբ պետք է խրախուսվի տարբեր լեզուների գործածությունը հասարակական վայրերում, ինչպես օրինակ՝ տարածքային վարչական կենտրոններում, ինչպես նաեւ զանգվածային լրատվամիջոցներում: Բացի դրանից, ոչ միայն փոքրամասնությունների լեզուների կրողների համար է կարեւոր մեծամասնության լեզուները սովորելը, այլեւ հակառակը: Շրջանակային կոնվենցիայի 6-րդ հոդվածում ներառված սկզբունքներին համապատասխան՝ լեզվական ներառական քաղաքականությունը պետք է բավարարի բոլորի՝ ներառյալ իրենց բնակության ավանդական վայրերից դուրս ապրող ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, ներգաղթողների եւ քաղաքացիություն չունեցող անձանց, կարիքները:³³

2.1. Մշակութային եւ լեզվական բազմազանության արտացոլում

34. Խորհրդատվական կոմիտեն պարբերաբար քննադատել է այն իրավիճակները, երբ փոքրամասնության մշակույթը եւ լեզուն չեն զարգացվում որպես հիմնական հասարակության անբաժան մաս, այլ ներկայացվում են որպես «սահմանային» մշակույթներ եւ լեզուներ: Սա կարող է հանգեցնել փոքրամասնության մշակույթի եւ լեզվի մեկուսացման եւ կարող է դառնալ փոքրամասնությունների պատկանող անձանց ասիմիլյացիայի պատճառ ավելի «առաջատար» ընկալվող մեծամասնության մշակույթում: Ուստի Խորհրդատվական կոմիտեն առաջարկում է ներառել փոքրամասնությունների մշակույթը որպես ընդհանուր մշակութային զարգացման անբաժան մաս՝ պատշաճ գնահատելով դրանց որոշակի առանձնահատկությունները եւ հասարակության համար դրական ներդրումը: Մասնավորապես, Խորհրդատվական կոմիտեն կոչ է արել իշխանություններին միջոցներ ձեռնարկել դպրոցական ծրագրերի միջոցով ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց լեզուների եւ մշակույթների մասին հանրային իրազեկությունը բարձրացնելու համար: Սա պետք է իրականացվի Կողմ հանդիսացող պետությունների ողջ տարածքում եւ ոչ թե միայն փոքրամասնությունների ավանդական բնակության վայրերում: Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին շարունակել իրազեկման բարձրացման միջոցառումները, որոնք մշակվել են զանգվածային լրատվամիջոցների

³³ Տե՛ս օրինակ՝ Ավստրիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը:

օգնությամբ եւ դպրոցներում՝ խթանելու եւ ընդգծելու հասարակությունների մշակութային եւ լեզվական բազմազանությունը:³⁴ Դա պետք է ներառի ուսուցիչների եւ պետական աշխատողների, այդ թվում՝ ոստիկանության վերապատրաստում՝ նրանց համար կազմակերպելով միջմշակութային եւ բազմամշակութային, ինչպես նաեւ մարդու իրավունքներին վերաբերող թեմաներով վերապատրաստումներ:³⁵

2.2. Մեծամասնության եւ փոքրամասնության լեզուների կրողների միջեւ փոխհարաբերությունները

35. Խորհրդատվական կոմիտեին մտահոգում են լեզուներին վերաբերող խնդիրների շուրջ աճող լարվածությունը եւ տարակարծությունները, ինչը կարող է տեղի ունենալ նույնիսկ այն հասարակություններում, որոնք սովորաբար բնութագրվում են տարբեր խմբերի պատկանող անձանց միջեւ խաղաղ հարաբերություններով: Խորհրդատվական կոմիտեն հատկապես մտահոգիչ է համարում, երբ լեզվի հիման վրա տարակարծությունները օգտագործվում են քաղաքական նպատակներով եւ ներկայացվում են որպես հասարակության մեջ տարանջատումների հիմնական պատճառ եւ երբ լեզվական պատկանելիության հիմքով անհանդուրժողականություն է հրահրվում քաղաքական հարթակում: Նման զարգացումները կարող են վնասել լավ հասարակական հարաբերությունները տասնամյակներ շարունակ:³⁶

36. Խտրական քաղաքականությունը եւ միջոցները, մասնավորապես կրթության ոլորտում, հաճախ հիմնավորվում են պաշտոնական լեզվի (լեզուների) ոչ բավարար իմացության հանգամանքով: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն դատապարտել է գնչուների նկատմամբ ռասայական խտրականությունը եւ նրանց առանձնացումը եւ կոչ է արել ձեռնարկել միջոցներ, որոնք կնպաստեն գնչուներենը ինչպես նաեւ մեծամասնության լեզուները ուսանելու հավասար մատչելիությանը գնչու փոքրամասնությանը պատկանող անձանց համար: Խորհրդատվական կոմիտեն նաեւ կոչ է անում իշխանություններին առավել ճկուն մոտեցում ցուցաբերել գնչու փոքրամասնությանը պատկանող այն անձանց նկատմամբ, որոնք տվյալ պետության քաղաքացիություն չունեն: Իշխանությունները համապատասխան դեպքերում պետք է դիտարկեն, գնչու փոքրամասնությանը պատկանող քաղաքացի հանդիսացող անձանց համար նախատեսված միջոցներից քաղաքացիություն չունեցողներին օգտվելու հնարավորություն տալու

³⁴ Հունգարիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

³⁵ Լիխտենշտեյնի վերաբերյալ առաջին եզրակացություն:

³⁶ Մոլդովայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Միացյալ Թագավորության վերաբերյալ երրորդ եզրակացություն: Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետության վերաբերյալ երրորդ եզրակացություն:

հարցը, հատկապես՝ կրթության ոլորտում:³⁷

37. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի որոշ փոքրամասնությունների պատկանող անձանց առաջ ծառայած լեզվական խոչընդոտներին՝ կապված ծառայությունների մատչելիության հետ, ինչը որոշ դեպքերում կարող է հավասարվել անուղղակի խտրականության: Սա կարող է վերաբերել պետական կարգավիճակ ունեցող լեզվի կրողների թվով ավելի փոքր խմբերին, ավանդական բնակության վայրերից դուրս ապրող ազգային փոքրամասնություններին, որոնք կարգավորվում են սույն Շրջանակային կոնվենցիայով, ինչպես նաև իրավական պաշտպանություն չունեցող լեզուներ կրողներին:

38. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն միջոցները, որոնք ձեռնարկվել են իշխանությունների կողմից դպրոցներում ներգաղթող եւ փախստական երեխաների ինտեգրմանը նպատակաուղղված, մասնավորապես՝ մայրենի լեզվի ուսուցման եւ միջմշակութային դասավանդման խթանման առումով, եւ խրախուսում է նրանց ընդլայնել նման միջոցառումների շրջանակը:³⁸ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ներգաղթած երեխաները, այլ խնդիրների շարքում, լեզվական սահմանափակումների պատճառով, կարող են դժվարությունների հանդիպել կրթություն ստանալու հարցում. սա հաճախ հանգեցնում է առավել մեծ ներկայացվածության ավելի ցածր՝ միջնակարգ դպրոցի մակարդակում եւ թերներկայացվածության միջնակարգ եւ բարձրագույն կրթության ավելի բարձր մակարդակում: Դպրոցում նման երեխաների ներկայացվածությունը եւ արդյունավետ ինտեգրումը բարելավելու նպատակով անհրաժեշտ են աջակցության լրացուցիչ միջոցներ, ինչպիսին են օրինակ՝ լեզվի արագացված դասընթացները, լրացուցիչ դասընթացները եւ տեղեկատվությունը, ինչպես նաև ընտանիքների համար նախատեսված իրազեկության բարձրացման միջոցառումները: Խորհրդատվական կոմիտեն նաև ողջունում է ներգաղթած ընտանիքներին, եւ մասնավորապես ներգաղթի պատմություն ունեցող կանանց ցուցաբերվող աջակցությունը՝ պաշտոնական լեզվով դասընթացների, խորհրդատվական ծառայությունների մատուցման եւ տեղեկատվության տրամադրման միջոցով:

39. Խորհրդատվական կոմիտեն նաև նշում է, որ որոշ երկրներ ներմուծել են ինտեգրման պայմանագրեր օտարալեզու ներգաղթողների համար: Ճանաչելով լեզվի կարեւորությունը որպես ինտեգրման գործիքի՝ այն շեշտում է, որ ինտեգրման գործընթացը ներառում է թե մեծամասնություն կազմող եւ թե փոքրամասնություն կազմող համայնքները, եւ պետք է

³⁷ Գերմանիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Իտալիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Նման գործելակերպը ողջունվել է Խորհրդատվական կոմիտեի կողմից Նորվեգիայի եւ Ավստրիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունների մեջ:

³⁸ Ֆինլանդիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

անհամաչափորեն չկենտրոնանա ներգաղթողների ջանքերի վրա:³⁹ Այս առումով Խորհրդատվական կոմիտեն քննադատել է մասնավորապես պատժամիջոցների կիրառումը ինտեգրման պայմանագրերի համատեքստում, ինչպիսիք են օրինակ, սոցիալական արտոնությունների կրճատումը, կամ բնակության/կացության թույլտվությունները երկարացնելու մերժումը կամ արտաքսման սպառնալիքը, քանի որ հարկադրանքը համարում է ինտեգրումը խթանելու ոչ պատշաճ միջոց:⁴⁰ Բացի դրանից՝ ձեռնարկվող բոլոր քայլերը պետք է անհատին հնարավորություն տան պահպանելու եւ զարգացնելու իր լեզվական ունակությունները, այդ թվում՝ մայրենի լեզվի առումով: Պետք է հարգել անձի ինքնության եւ մշակույթի պահպանումը, այդ թվում՝ մի քանի ինքնությունների պատկանելիությունը եւ բազմալեզվությունը, եւ աջակցել դրանց զարգացմանը ոչ միայն տվյալ անձի համար դրանց էական ճանաչողական նշանակության պատճառով, այլեւ որպես հասարակության բարեհաջող ինտեգրման կարեւոր նախապայման:

³⁹ Լիխտենշտեյնի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

⁴⁰ Ավստրիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

ՄԱՍ IV ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

40. Լրատվամիջոցները կարելի է դիտարկել որպես խաղում ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների առումով: Փոքրամասնության լեզվով տեղեկություններ եւ կարծիքներ ստանալու եւ փոխանցելու իրավունքը, ինչպես այն սահմանված է Շրջանակային կոնվենցիայի 9-րդ հոդվածում, կախված է լրատվամիջոցների հասանելիության իրական հնարավորություններից: Ավելին, տեղեկություններ ստանալու եւ փոխանցելու հնարավորությունը մի լեզվով, որն անձը կարող է լիարժեքորեն հասկանալ եւ դրանով հաղորդակցվել, հասարակական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային կյանքում հավասար եւ գործուն մասնակցության նախապայման է: Ավելին, որպեսզի լեզուն զարգանա բոլոր ոլորտներում եւ կրողին ծառայի որպես հաղորդակցության բազմակողմ միջոց, այն պետք է առկա լինի հանրային ոլորտում, այդ թվում՝ հանրային լրատվամիջոցներում: Փոքրամասնությունների լեզուների առկայությունը հանրային լրատվամիջոցներում ավելի է ամրապնդում սոցիալական համախմբվածությունը, քանի որ արտացոլում է փոքրամասնությունների մասով ընդհանուր ներառական քաղաքականություն՝ հիմնված սեփական անձի ճանաչման գաղափարի ընդունման եւ խրախուսման վրա:

1. Հանրային հատվածի լրատվամիջոցներ

41. Որպեսզի հանրային հեռարձակումը արտացոլի հասարակության մեջ գոյություն ունեցող մշակութային եւ լեզվական բազմազանությունը, պետք է ապահովվել փոքրամասնությունների պատկանող անձանց եւ նրանց լեզուների, այդ թվում՝ թվով ավելի փոքր ազգային փոքրամասնությունների պատշաճ ներկայացվածություն: Սա ենթադրում է լրատվամիջոցներին, ինչպես նաեւ փոքրամասնության եւ մեծամասնության լեզուներով՝ ազգային փոքրամասնությունների համար նախատեսված, նրանց կողմից ստեղծված եւ նրանց մասին պատմող, ինչպես նաեւ երկլեզու եւ բազմալեզու ձեռագրերին աջակցության տրամադրում: Փոքրամասնությունների շահերը եւ մտահոգությունները նույնպես պետք է ներկայացվեն կանոնավոր հեռարձակումներում եւ ոչ թե առանձնացվեն կանոնավոր բնույթ չունեցող ծրագրերում, իսկ հիմնական լրատվամիջոցները պետք է ընդգրկվեն ավելի լայնածավալ քաղաքական քննարկումներում, որոնք հետաքրքրություն են ներկայացնում փոքրամասնությունների պատկանող անձանց համար:⁴¹ Այդ նպատակով քայլեր պետք է ձեռնարկվեն հիմնական լրատվամիջոցների ծրագրերում փոքրամասնության պատկանող լրագրողներ աշխատանքի վերցնելու եւ նրանց պահելու ուղղությամբ, ինչպես նաեւ ապահովել, որ

⁴¹ Խորվաթիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

փոքրամասնությունները նույնպես ներկայացված լինեն հեռարձակման հարցերով խորհուրդներում: Բացի դրանից, ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք պետք է մասնակցեն փոքրամասնության լեզվով հաղորդումների պատրաստմանը՝ ապահովելու համար, որ այդ ծրագրերը պատշաճ կերպով արտացոլեն փոքրամասնության համայնքների շահերը եւ մտահոգությունները: Պետք է ապահովել, որ փոքրամասնությունների լեզվով ծրագրերը լինեն որակյալ առավել լայն լսարան գրավելու համար եւ հեռարձակվեն հարմար ժամերի:⁴²

42. Քանի որ փոքրամասնությունների լեզուներով հեռարձակման համար հաճախ պահանջվում են լրացուցիչ ջանքեր՝ թարգմանության եւ համապատասխան տերմինաբանության մշակման առումով, ուստի բյուջեի հատկացումները այդ ծրագրերի համար պետք է համապատասխանեցվեն:⁴³ Պետական ֆինանսավորման հասանելիությունը փոքրամասնության կազմակերպությունների եւ լրատվամիջոցների համար պետք է մեծացվի՝ ապահովելով, որ կիրառվեն ընդհանուր չափանիշներից բացառություններ, ինչպես օրինակ՝ տարածման կամ հեռարձակման նվազագույն գոտին կամ մրցույթներին մասնակցության որոշակի պայմանները:⁴⁴ Հատուկ ուշադրություն պետք է դարձվի թվով ավելի փոքր փոքրամասնությունների եւ հատկապես խոցելի խմբերի կարիքներին, ինչպես օրինակ՝ գնչուական համայնքները, որոնց համար զանգվածային լրատվամիջոցների հասանելիությունը սեփական լեզվով սովորաբար խիստ սահմանափակ է, եւ որոնք տուժում են որակավորում ունեցող լրագրողների բացակայությունից՝ վերապատրաստված փոքրամասնության լեզվով աշխատելու համար: Երբ լրատվամիջոցները կենտրոնական դեր են խաղում լեզվի վերականգնման ընթացիկ գործընթացում, վճռական պետական աջակցությունն անհրաժեշտ է: Իշխանությունները պետք է ավելի մեծ ֆինանսավորում տրամադրեն այն կազմակերպություններին եւ լրատվամիջոցներին, որոնք ներկայացնում են այս փոքրամասնություններին՝ նրանց ինքնությունը, լեզուն, պատմությունը եւ մշակույթը մեծամասնության ուշադրությանը ներկայացնելու նպատակով:

43. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ մի շարք երկրներ սահմանել են բարձր քվոտաներ պաշտոնական լեզվով (լեզուներով) հեռարձակման համար: Ընդունելով պաշտոնական լեզուն (լեզուները) զարգացնելու նպատակի իրավաչափությունը՝ Խորհրդատվական կոմիտեն իր եզրահանգումներում մշտապես ընդգծել է, որ հատուկ դրույթներ պետք է ներմուծվեն ապահովելու համար, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց լեզվական իրավունքները երաշխավորված լինեն, օրինակ, նման քվոտաների ճկուն կիրառման եւ/կամ բացառություններ կատարելու միջոցով այն շրջաններում, որտեղ ապրում են փոքրամասնության համայնքներ՝ զգալի

⁴² Ռումինիայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁴³ Հունգարիայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁴⁴ Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ երրորդ եզրակացություն (սահմանափակ օգտագործման համար): Ավստրիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

թվաքանակով:⁴⁵ Լեզվական քվոտաների սահմանումը երբեք պետք է չենթադրի բովանդակության վերահսկողություն եւ լիովին պետք է հարգի լրատվամիջոցների ազատությունը: Նման քվոտաները պահպանելու նպատակով թարգմանության կամ ենթագրի ծախսերը պետք է հաշվի առնվեն փոքրամասնության լեզվով զանգվածային լրատվամիջոցներին պետական ֆինանսավորում հատկացնելիս:

44. Ավելին, կարելի է նշել, որ Շրջանակային կոնվենցիայի 6-րդ հոդվածով հստակորեն պահանջվում է լրատվամիջոցների ոլորտում գործողություններ ձեռնարկել՝ հասարակության մեջ հանդուրժողականությանը եւ միջմշակութային երկխոսությանը եւ սոցիալական համախմբվածությանը նպաստելու նպատակով: Խորհրդատվական կոմիտեն պարբերաբար ընդգծել է լրատվամիջոցների կարելի դերը բազմազանության համար հանդուրժողականության եւ հարգանքի մթնոլորտ ձեւավորելու գործում եւ քննադատել է լրատվամիջոցները կողմնակալ լրատվության միջոցով միջէթնիկ թշնամությունը խորացնելու համար:⁴⁶ Այս համատեքստում կարելի է ապահովել կարգավորող մարմինների ստեղծումը էթիկայի կանոններին համապատասխան լրագրությունը զարգացնելու նպատակով, այդ թվում կազմակերպելով թիրախ խմբերի համար վերապատրաստում եւ իրազեկության բարձրացման միջոցառումներ, եւ որպեսզի այդ խմբերը ընդգրկեն փոքրամասնության ներկայացուցիչներ եւ կանոնավոր կերպով խորհրդակցեն փոքրամասնությունների համայնքների հետ:

2. Մասնավոր հատվածի լրատվամիջոցներ

45. Խորհրդատվական կոմիտեն գնահատում է մասնավոր եւ համայնքային լրատվամիջոցների էական դերը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց լեզվական իրավունքների իրականացման հարցում եւ ողջունել է մասնավոր հատվածի լրատվամիջոցների ներդրումը հասարակության մեջ ինտեգրման եւ մշակութային բազմազանության ընդհանուր գնահատման հարցում:⁴⁷ Հաշվի առնելով մասնավոր հատվածի լրատվամիջոցների մրցակցային դիրքը՝ իշխանությունները պետք է դիտարկեն մասնավոր եւ հանրային հատվածի լրատվամիջոցների համար խթաններ ստեղծելու հարցը, օրինակ՝ ֆինանսավորման կամ հաճախականությունների տրամադրման միջոցով՝ նպատակ հետապնդելով բարելավել լրատվամիջոցների հասանելիությունը հատկապես թվով ավելի փոքր փոքրամասնությունների համար, ինչպես նաեւ նման փոքրամասնությունների ու նրանց լեզուների ներկայությունը դրանցում: Այս առումով

⁴⁵ Ուկրաինայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁴⁶ Տե՛ս օրինակ Ուկրաինայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը (սահմանափակ օգտագործման համար), Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ երրորդ եզրակացությունը (սահմանափակ օգտագործման համար):

⁴⁷ Տե՛ս օրինակ՝ Ավստրիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը:

հատուկ ուշադրություն պետք է դարձվի մասնավոր կարիքներին գյուղական եւ հեռավոր շրջաններում, որտեղ ավանդաբար բնակվում կամ զգալի թիվ են. կազմում ազգային փոքրամասնության պատկանող անձինք:

46. Մասնավոր լրատվամիջոցների հատվածում պաշտոնական լեզվի քվոտաների կիրառման առումով, Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ հատուկ ուշադրություն պետք է դարձվի ապահովելուն, որ մասնավոր նախաձեռնությունները անհարկի չսահմանափակվեն եւ որ լեզվի քվոտաները չխոչընդոտեն փոքրամասնության լեզվով լրատվամիջոցների ստեղծմանը կամ դրանց գործունեության շարունակությանը:⁴⁸ Խորհրդատվական կոմիտեն գտել է, որ մասնավոր լրատվամիջոցների հատվածում պաշտոնական լեզվի 75% քվոտայի կիրառումը չի համապատասխանում Շրջանակային կոնվենցիայի 9.3 հոդվածին:⁴⁹ Փոքրամասնությունների լեզվով թողարկվող լրատվամիջոցները կարող են բախվել այնպիսի բացասական հետեւանքների, ինչպիսիք են հեռարձակման ժամանակի սահմանափակումը, պաշտոնական լեզվով թարգմանության կամ ենթագրերի ստեղծման անհրաժեշտության հետ կապված մեծ ծախսերը, իրավական դրույթների խախտումների համար տուգանքները այս ոլորտում:

3. Տպագիր մամուլ

47. Թեեւ 9.3 հոդվածը հիմնականում պարունակում է տպագիր մամուլի ստեղծմանը եւ օգտագործմանը չխոչընդոտելու պարտավորություն, Խորհրդատվական կոմիտեն առանձին երկրների համար մի շարք եզրակացություններում շեշտել է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար տպագիր մամուլի հատուկ նշանակության մասին:⁵⁰ Հանդիսանալով տեղեկություն եւ նորություններ ստանալու կարեւոր եւ ավանդական միջոց՝ հատկապես փոքրամասնության տվյալ համայնքի տարեց անդամների համար՝ փոքրամասնության լեզվով տպագիր հրատարակությունները նաեւ ունեն էական սիմվոլիկ եւ «էմբլեմատիկ» արժեք ամբողջ համայնքի համար, քանի որ դրանք փաստում են հանրային ոլորտում տվյալ լեզվի գոյության մասին: Բացի դրանից, Խորհրդատվական կոմիտեն պարբերաբար նկատել է, որ փոքրամասնության համայնքներն իրենց փոքրամասնության լեզվով տպագիր մամուլը համարում են իրենց հատուկ մշակույթը եւ լեզուն հիմնական հասարակության մեջ պահպանելու եւ զարգացնելու կարեւոր միջոց: Խորհրդատվական կոմիտեն, ուստի, շեշտել է, որ անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել նման հրատարակություններին, որոնք իրենց փոքր մասշտաբների պատճառով հաճախ առետրային տեսանկյունից կենսունակ չեն, քանի որ դրանց հատուկ

⁴⁸ Մոլդովայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

⁴⁹ Ուկրաինայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁵⁰ Տե՛ս, օրինակ՝ Ֆինլանդիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը:

նշանակությունը փոքրամասնության համայնքի համար չեն կարող փոխարինել ժամանակակից եւ էլեկտրոնային լրատվամիջոցները: Այն խրախուսել է պետություններին ապահովել, որ մամուլի սուբսիդավորմանը վերաբերող իրենց ընդհանուր կանոնները, որոնք հաճախ պարունակում են այնպիսի պայմաններ, ինչպիսիք են տպագրված օրինակների նվազագույն քանակը կամ պետության ամբողջ տարածքում տարածվածությունը, չկիրառվեն փոքրամասնության լեզվով տպագիր մամուլի դեպքում, որոնք հավանական չէ, որ երբեւէ կկարողանան բավարարել այդ պայմանները:⁵¹ Երբ փոքրամասնության լեզվով տպագիր մամուլին տրամադրվում է սուբսիդավորում կամ աջակցություն, այն պետք է հատկացվի պարզ եւ թափանցիկ ընթացակարգերի համաձայն եւ խոսքի ազատության իրավունքի պահպանմամբ:

4. Լրատվամիջոցների տեխնոլոգիական առաջընթացը եւ դրա ազդեցությունը փոքրամասնությունների վրա

48. Ինչպես մասնավոր լրատվամիջոցների հատվածում ավելանում են փոքրամասնությունների լեզվով պատրաստված ծրագրերը, այնպես էլ համացանցում կայուն աճ են ապրում փոքրամասնության լեզվով տեղադրված հրատարակումները: Էլեկտրոնային մամուլը հաճախ կարելի է խաղում փոքրամասնությունների լեզուներով տեղեկատվության շրջանառության հարցում: Թեեւ դրանք չեն փոխարինում ավանդական տպագիր մամուլին, պետք է հաշվի առնվեն փոքրամասնությունների լեզուներով մամուլի թողարկումները ֆինանսավորելիս: Կարելի է նշել, որ անհրաժեշտ է մասնագիտական եւ ֆինանսական աջակցություն կարիք կայքէջերի տեխնիկական սպասարկման եւ փոքրամասնության լեզվով էլեկտրոնային մամուլի համար աշխատող լրագրողների վերապատրաստման համար:⁵²

49. Մամուլի ոլորտում տեխնիկական եւ տեխնոլոգիական զարգացումները, այդ թվում սոցիալական ցանցերի բնագավառում, ստեղծում են հնարավորություններ, սակայն կարող են նաեւ խոչընդոտ դառնալ փոքրամասնության լեզուներով մամուլի մատչելիության տեսանկյունից՝ կախված այն բանից, թե ինչպես են այդ փոփոխությունները ներմուծվում եւ թե ինչպես է խթանվում շահագրգիռ խմբերի կողմից դրանց ընդունումը: Փոքրամասնությունների համայնքների հատուկ կարիքները եւ հետաքրքրությունները պետք է հաշվի առնվեն, օրինակ, երբ փոխվում են հաճախականությունները:⁵³ Քանի որ առկա եթերային հաճախությունների թիվը սահմանափակ է, հեռարձակման ալիքները կարող են բազմապատկվել թվայնացման միջոցով:

⁵¹ Տե՛ս օրինակ՝ Ավստրիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը, Ֆինլանդիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը:

⁵² Կիպրոսի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

⁵³ Սլովակիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

Սակայն, կարելի է, որ մամուլի թվայնացման առաջընթացը չսահմանափակի ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հնարավորությունները իրենց լեզուներով լրատվություն ստանալու առումով: Նոր տեխնոլոգիաների ներմուծումը կարող է նաեւ հեշտացնել այլ՝ հաճախ հարեւան երկրներում թողարկվող՝ փոքրամասնությունների լեզուներով ծրագրերի ընդունումը, ինչը խրախուսվում է Շրջանակային կոնվենցիայի 17-րդ հոդվածով: Սա, սակայն պետք է չհամարել որպես փոխարինում առանձին երկրներում պատրաստված ծրագրերի, որոնք սովորաբար ավելի լավ են բավարարում փոքրամասնությունների համայնքների կարիքները եւ հետաքրքրությունները:⁵⁴

5. ԿԻՆՈՅԻ/ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐ

50. Փոքրամասնությունների լեզուներով տեղական արտադրության ֆիլմերը եւ երաժշտությունը կարող են նույնպես կարելի դեր խաղալ հասարակական կյանքում փոքրամասնության լեզվի վարկը եւ ներկայությունը խթանելու գործում, եւ հավասարապես պաշտպանված են Շրջանակային կոնվենցիայի 9-րդ հոդվածի դրույթներով: Խորհրդատվական կոմիտեն գտել է, օրինակ, որ իշխանությունները չպետք է սահմանեն ավելորդ պահանջներ պաշտոնական լեզվով կրկնօրինակման, հետ-սինխրոնացման կամ ենթագրման առումով, քանի որ դա կարող է անհամաչափորեն խոչընդոտել փոքրամասնությունների լեզուներով ֆիլմերի արտադրությանը եւ ցուցադրմանը:⁵⁵

⁵⁴ Գերմանիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Մոլդովայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

⁵⁵ Ուկրաինայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

**1. ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՐԵՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
 ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ**

51. Լեզվական իրավունքները արդյունավետ են, եթե միայն դրանք կարող են իրականացվել հանրային ոլորտում: Շրջանակային կոնվենցիայի 10-րդ հոդվածում ընդգրկված են փոքրամասնությունների լեզուները բանավոր եւ գրավոր ձեւով, անձնական կյանքում եւ հրապարակայնորեն, այդ թվում՝ որոշակի պայմաններով, վարչական մարմինների հետ հարաբերություններում, գործածելու իրավունքին վերաբերող հիմնական սկզբունքներ: Հաշվի առնելով այս իրավունքի կարեւորությունը, էական է, որ լեզվական քաղաքականության եւ լեզվական իրավունքների իրականացման վերաբերյալ ցանկացած որոշում կայացվի փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ մանրամասն խորհրդակցության արդյունքում՝ ապահովելու համար, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մտահոգությունները իրականում պատշաճ կերպով հաշվի առնվեն:

1.1. Պաշտոնական լեզվի մասին օրենքներ կամ «պետական լեզվի մասին» օրենքներ

52. Իր լեզուն անձնական կյանքում եւ հրապարակայնորեն, բանավոր կամ գրավոր ձեւով, ազատորեն եւ անարգել գործածելու իրավունքը համարվում է լեզվական ինքնությունը հաստատելու եւ պահպանելու հիմնական միջոցներից մեկը: Ընդունելով, որ փոքրամասնության լեզուն գործածելու իրավունքը երբեք պետք է չտոնահարվի, 10.1 հոդվածը միաժամանակ սահմանափակում է պետության միջամտությունը փոքրամասնության լեզվի հրապարակայնորեն գործածման հարցում, ինչպես օրինակ հասարակական վայրերում եւ այլ անձանց ներկայությամբ: Լեզվի մասին օրենսդրությունը կարող է փոքրամասնությունների լեզուների գործածությունը սահմանափակել միայն այն դեպքերում, երբ մասնավոր ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ ինստիտուտների գործունեությունը բացասաբար է անդրադառնում իրավաչափ հանրային շահի վրա, ինչպես օրինակ հանրային անվտանգությունը, առողջությունը, սպառողների պաշտպանությունը եւ աշխատանքային իրավունքները կամ աշխատավայրում անվտանգությունը: Ցանկացած նման միջոցի անհրաժեշտությունը եւ համաչափությունը պետք է հիմնավորվի, եւ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվեն առնչություն ունեցող անհատների իրավունքներն ու շահերը: Այսպիսով, իրավաչափ հանրային շահի գաղափարը պետք է նեղ

մեկնաբանվի: Ինչ վերաբերում է սպառողների իրավունքներին, օրինակ, առողջության եւ անվտանգության նկատառումները (ինչպես դեղամիջոցների դեպքում) պետք է գերակայություն ունենան սպառողների մեծամասնության՝ պաշտոնական լեզուն գործածելու զուտ նախապատվության նկատմամբ:

53. Պետությունները կարող են ընդունել օրենքներ, որոնց նպատակն է ամրապնդել եւ պաշտպանել պաշտոնական լեզվի (լեզուների) գործածությունը:⁵⁶ Այս իրավաչափ նպատակը, սակայն, պետք է հետապնդել այնպես, որ այն համապատասխանի 10-րդ եւ 11-րդ հոդվածներում սահմանված իրավունքներին եւ Շրջանակային կոնվենցիայի այլ համապատասխան դրույթներին, ինչպես նաեւ հասարակության մեջ հանդուրժողականություն եւ փոխադարձ ըմբռնում խրախուսելու Կոնվենցիայի ընդհանուր ոգուն: Հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ իրենց լեզուն ազատորեն եւ անարգել օգտագործելու հստակ սահմանված իրավունքը՝ ընդգրկված 10.1 հոդվածում՝ պետության լեզվի մասին օրենքները պետք է հատկապես չխախտեն անձի մասնավոր իրավունքները: Պաշտոնական լեզուների զարգացմանը նպատակաուղղված միջոցները պետք է կիրառվեն այնպես, որ հարգվեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ինքնությունը եւ լեզվական կարիքները: Ուստի, իշխանությունները պետք է ձգտեն համապատասխան հավասարակշռության հասնել պաշտոնական լեզվի (լեզուների) եւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց լեզվական իրավունքների պաշտպանության հարցում: Այս առումով տարածմանը նպատակաուղղված եւ խրախուսական միջոցները շատ ավելի արդյունավետ մոտեցում են բնակչության բոլոր անդամների կողմից պաշտոնական լեզվի (լեզուների) իմացությունը եւ օգտագործումը ամրապնդելու հարցին, քան հարկադրանքի ցանկացած ձեւը:

54. Որոշ պետություններ հաստատել եւ կիրառում են պատժիչ միջոցներ, ինչպես օրինակ՝ տուգանքներ սահմանելը կամ մասնագիտական արտոնագրերը ետ վերցնելը՝ պաշտոնական լեզուների գործածությունը պարտադրելու համար:⁵⁷ Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ պետական լեզվի մասին օրենքի դրույթները չկատարելու համար ցանկացած բնույթի պատժամիջոցները պետք է լինեն խիստ համաչափ եւ պաշտպանեն հստակորեն հիմնավորված, իրավաչափ եւ կարեւորագույն հանրային շահ: Այս առումով Խորհրդատվական կոմիտեն գտել է, որ մասնավոր ոլորտում իրենց փոքրամասնությունների լեզուները գործածելու համար տուգանքներ սահմանելու զուտ իրավական հնարավորությունը՝ լինի դա իրավաբանական

⁵⁶ Մի շարք երկրներում պաշտոնական լեզուն (ինչպես նշված է Շրջանակային կոնվենցիայի 14.3 հոդվածում եւ Բացատրական զեկույցում) կոչվում է «պետական լեզու» եւ ենթադրում է լեզվի՝ պետության հետ նույնականացման կարեւոր գործառույթ:

⁵⁷ Սլովակիայի Հանրապետության վերաբերյալ երրորդ եզրակացություն: Էստոնիայի վերաբերյալ առաջին եւ երկրորդ եզրակացություն:

անձանց, թե ոչ վարձու ֆիզիկական անձանց նկատմամբ, չի համապատասխանում Շրջանակային կոնվենցիայի դրույթներին: Լեզվի ստուգման համակարգերի ներդնումը մասնավոր հատվածում հավասարապես անհամատեղելի է Շրջանակային կոնվենցիայի հետ, քանի որ դրանք անհամաչափորեն կարող են ներխուժել անհատի անձնական կյանք:⁵⁸

1.2. Վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուների գործածությունը այն տարածքներում, որտեղ ավանդաբար կամ զգալի թվաքանակով ազգային փոքրամասնություններ են բնակվում

55. 10.2 հոդվածը սահմանում է այն պայմանները, որոնց համաձայն փոքրամասնությունների լեզուները կարող են գործածվել նաեւ վարչական մարմինների հետ հարաբերություններում: Այս գործածությունը պետք է չվնասի պաշտոնական լեզվին (լեզուներին): Թեեւ պետությունները հայեցողական իրավունք ունեն որոշելու այն տարածքները, որտեղ փոքրամասնություններն ապրում են «զգալի թվաքանակով», նրանք պարտավոր են հստակ չափանիշներ սահմանել, թե որն է համարվում «բավարար թվաքանակ» կամ «բավականաչափ մեծ թվաքանակ»:⁵⁹ Վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուները գործածելու հնարավորությունը բոլոր այն տարածքներում, որտեղ Շրջանակային կոնվենցիայի 10.2 հոդվածով սահմանված չափանիշները բավարարված են, չի կարող ընձեռվել միայն ըստ համապատասխան տեղական մարմինների հայեցողության: Ուստի, կարելի է ներդնել հստակ եւ թափանցիկ ընթացակարգեր այն մասին, թե ինչպես եւ երբ պետք է հաստատել փոքրամասնությունների լեզուների գործածությունը, այդ թվում՝ գրավոր ձեւով՝ ապահովելու համար, որ այդ իրավունքից հավասարապես օգտվեն բոլորը:

56. Քանի որ 10.2 հոդվածում սահմանված իրավունքները շնորհվում են ըստ երկու հիմնական չափանիշներից մեկի (զգալի թվաքանակ կամ ավանդաբար բնակեցված տարածք), դրանք կիրառելի են նաեւ այնպիսի տարածքների նկատմամբ, որտեղ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց միայն հարաբերականորեն փոքր տոկոսն է բնակվում, պայմանով, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք *ավանդաբար* բնակվել են այդ տարածքներում, որ առկա է այդ անձանց կողմից ներկայացված պահանջ, եւ որ այդ պահանջը համապատասխանում է իրական կարիքի: Պետությունները պետք է մանրամասնորեն ուսումնասիրեն պահանջարկը եւ գնահատեն առկա կարիքները այն աշխարհագրական տարածքներում, որտեղ ազգային փոքրամասնության պատկանող անձինք զգալի թվաքանակով

⁵⁸ Լատվիայի վերաբերյալ առաջին եզրակացություն:

⁵⁹ Հայաստանի վերաբերյալ առաջին եզրակացություն:

կամ ավանդաբար բնակություն են հաստատել՝ հաշվի առնելով նաև առանձնահատուկ տեղական իրավիճակը:⁶⁰ «Կարիք»-ն այս համատեքստում չի նշանակում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ պաշտոնական լեզվով խոսելու անկարողությունը եւ արդյունքում նրանց կախվածությունը իրենց փոքրամասնության լեզվով մատուցվող ծառայություններից: Ցանկացած տվյալ շրջանում փոքրամասնության լեզվի՝ որպես հաղորդակցության գործիքի, ֆունկցիոնալությանը սպառնացող վտանգը բավարար է «կարիք» համարվելու համար Շրջանակային կոնվենցիայի 10.2 հոդվածի համաձայն:⁶¹ Պետք է ձեռնարկվեն պաշտպանական միջոցառումներ փոքրամասնության լեզվով մատուցվող ծառայությունները պահպանելու համար, եթե նույնիսկ այդ լեզուն լայն գործածություն չունի, քանի որ այն, այլապես, կարող է անհետանալ հանրային ոլորտից: Բացի դրանից, պետությունները պետք է բավարար պահանջարկի գոյության մասին որոշումներ չընդունեն այնպիսի մարմիններում կայացած քննարկումների հիման վրա, որտեղ ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք արդյունավետ կերպով ներկայացված չեն:⁶²

57. Թվային շեմերը պետք է չհանդիսանան անհարկի խոչընդոտ որոշ փոքրամասնությունների լեզուների պաշտոնական գործածության համար այն տարածքներում, որտեղ բնակվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք՝ ավանդաբար կամ զգալի թվաքանակով: Մասնավորապես, պահանջը, որ փոքրամասնական խումբը պետք է կազմի շրջանի բնակչության առնվազն կեսը, որպեսզի թույլատրվի տեղական վարչական մարմինների հետ այդ փոքրամասնության լեզվով շփումը, չի համապատասխանում Շրջանակային կոնվենցիայի պահանջներին:⁶³ Եթե գոյություն ունեն շեմեր, ապա դրանք պետք է չկիրառվեն խստորեն, այլ պետք է ցուցաբերվի ճկունություն եւ զգուշավորություն:⁶⁴ Խորհրդատվական կոմիտեն ողջունել է որոշ տեղական վարչական մարմինների պաշտոնյաների կողմից ցուցաբերված ճկունությունը փոքրամասնությունների լեզուների գործածության վերաբերյալ խիստ իրավական դրույթները կիրառելու գործում, երբ, գործնականում, փոքրամասնությունների լեզուներով հաղորդակցությունը եւ գրագրությունը, այնուամենայնիվ, ընդունելի են, եթե նույնիսկ գրավոր պատասխանները տրվում են պաշտոնական լեզվով:⁶⁵ Ընդհանուր առմամբ, Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է պետություններին մանրամասնորեն ուսումնասիրել զգալի թվաքանակով ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքները որոշելու համար շեմերի սահմանման հարցը եւ ողջունում է իշխանությունների կողմից ձեռնարկված

⁶⁰ Բուլղարիայի վերաբերյալ առաջին եզրակացություն:

⁶¹ Նիդերլանդների վերաբերյալ առաջին եզրակացություն:

⁶² Իտալիայի վերաբերյալ առաջին եզրակացություն:

⁶³ Բոսնիայի եւ Հերցեգովինայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁶⁴ Տե՛ս Ալբանիայի Հանրապետության վերաբերյալ երրորդ եզրակացությունը 20% շեմի առնչությամբ:

⁶⁵ Էստոնիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

միջոցառումները՝ ուղղված հարկ եղած դեպքում, նման շեմերը նվազեցնելուն:

58. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է օրենքով սահմանված հնարավորությունները առավելագույն կերպով օգտագործել՝ թույլատրելու համար փոքրամասնությունների լեզուների գործածությունը տեղական մակարդակով վարչական մարմինների հետ շփումներում եւ կրթության ոլորտում: Իշխանությունները պետք է աջակցեն եւ ակտիվորեն խրախուսեն նման միջոցները՝ ստեղծելով միջավայր, որը նպաստում է փոքրամասնությունների լեզուների գործածությանը, այդ թվում՝ անհրաժեշտ ֆինանսական եւ մարդկային ռեսուրսների հատկացման միջոցով:⁶⁶ Այս համատեքստում, իշխանություններին նաեւ կոչ է արվում մանրամասն ուսումնասիրել այն ազգային փոքրամասնությունների եւ լեզվական առանձին խումբ կազմող համայնքների դրությունը, որոնց անդամները բնակվում են ավանդական տարածքներից դուրս (հաճախ մայրաքաղաքներում)՝ զգալի թվով: Խորհրդատվական կոմիտեն այս առումով կրկին նշել է, որ 10.2 հոդվածի պայմանները համարվում են բավարարված, եթե գոյություն ունի պահանջարկ եւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք ապրում են զգալի թվով:⁶⁷

1.3 Քրեական վարույթի ընթացքում տեղեկացված լինելու իրավունք

59. Շրջանակային կոնվենցիայի 10.3 հոդվածի համաձայն ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ իրավունք ունի քրեական վարույթի ընթացքում տեղեկացված լինելու ձերբակալման պատճառների եւ իր դեմ ներկայացված ցանկացած մեղադրանքի բնույթի եւ պատճառի մասին իր համար հասկանալի լեզվով: Այս իրավունքները նաեւ երաշխավորված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ եւ 6-րդ հոդվածներով: Սակայն, Խորհրդատվական կոմիտեն բազմիցս նշել է, որ թեեւ կարող են գոյություն ունենալ համապատասխան իրավական դրույթներ, այս իրավունքը հաճախ կանոնավոր կերպով չի իրականացվում անբավարար ֆինանսական միջոցների եւ (կամ) որակավորված թարգմանիչների բացակայության պատճառով: Սա հատկապես վերաբերում է թվով ավելի փոքր փոքրամասնությունների լեզուներին: Խորհրդատվական կոմիտեն հետեւողականորեն խրախուսել է իշխանություններին անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկել ապահովելու համար, որ փոքրամասնությունների լեզվական իրավունքները դատական համակարգում լիովին պաշտպանված լինեն, այդ թվում հետաքննության եւ մինչդատական փուլերում:⁶⁸ Բացի դրանից, Խորհրդատվական կոմիտեն ողջունել է փոքրամասնության լեզվով թարգմանության իրավունքի երաշխավորումը ոչ միայն քրեական վարույթի համատեքստում, այլ նաեւ քաղաքացիական եւ

⁶⁶ Սլովենիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Շվեյցարիայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁶⁷ Ֆինլանդիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Նորվեգիայի վերաբերյալ առաջին եզրակացություն:

⁶⁸ Չեխիայի Հանրապետության վերաբերյալ առաջին եզրակացություն:

1.4 Փոքրամասնությունների լեզուների այբուբեն

60. 10-րդ հոդվածը չի անդրադառնում այբուբենի ընտրության հարցին փոքրամասնության լեզուն գործածելու իրավունքից առանձին: Խորհրդատվական կոմիտեն այբուբենը համարում է լեզվի անբաժան մաս եւ, ուստի, կոչ է անուն պետություններին չտարանջատել երկու հասկացությունները, եւ ոչ էլ ստեղծել առանձին կանոններ: Ավելին, Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ այն դեպքերում, երբ լեզվի գործածությունը չի վերաբերում պետական մարմինների հետ հարաբերություններին, այբուբենի ընտրությունը, որպես կանոն, պետք է թողնվի տվյալ անձի հայեցողությանը եւ պետք է չենթարկվի որեւէ նորմատիվ սահմանափակման:⁷⁰

2. ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՂՈՒՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ, ՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

2.1. Անձնական անուններ եւ հայրանուններ

61. Փոքրամասնության լեզվով սեփական անձի անունը գործածելու եւ այն պաշտոնապես ճանաչել տալու իրավունքը հիմնական լեզվական իրավունք է, որը սերտորեն կապված է անձի ինքնության եւ արժանապատվության հետ եւ շեշտվել է Խորհրդատվական կոմիտեի կողմից առանձին երկրների համար մի շարք եզրակացություններում:⁷¹

Կողմ հանդիսացող պետությունները պետք է երաշխավորեն, որ անհատները խոչընդոտների չեն հանդիպի կամ չեն ենթարկվի ճնշումների իրենց լեզվով անունների գործածման եւ ճանաչման առնչությամբ: Սա նշանակում է, որ համապատասխան քաղաքացիները, օրինակ՝ ծննդյան վկայականներ տրամադրող մարմինները, պետք է տեղյակ լինեն իրենց պարտավորությունների մասին: Թեեւ այս դրույթը ձեակերպված է այնպես, որ Կողմ հանդիսացող պետություններին հնարավորություն է տալիս այն կիրառել հաշվի առնելով իրենց առանձնահատուկ հանգամանքները եւ իրավական համակարգը, միջազգային ստանդարտներին համապատասխանող հստակ օրենսդրական հիմքեր պետք է գոյություն ունենան եւ կիրառվեն հավասար հիմունքներով:

⁶⁹ Վրաստանի վերաբերյալ առաջին եզրակացություն: Ռումինիայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁷⁰ Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ երկրորդ եզրակացություն: Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ երրորդ եզրակացություն (սահմանափակ օգտագործման համար)

⁷¹ Տե՛ս, օրինակ՝ Լիտվայի վերաբերյալ երկրորդ եզրակացությունը, Ֆինլանդիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը:

62. Այն դեպքերում, երբ անձինք պարտավոր են եղել փոխել իրենց անունները կամ հրաժարվել դրանցից, Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդվածը պահանջում է, որ հնարավոր լինի անձնագրերում, ինքնության փաստաթղթերում կամ ծննդյան վկայականներում ավելացնել իրական անունը: Գրանցումը պետք է կատարվի համապատասխան անձի կամ նրա ծնողների խնդրանքով:⁷² Այդ մասին փաստաթղթային ապացույց ներկայացնելու պահանջը, գործնականում, պետք է անհարկի չսահմանափակի ինքնության փաստաթղթերում իրական անուններն ավելացնելու իրավունքը, եւ ոչ էլ դրա հետ կապված ծախսերը պետք է լինեն չափազանց մեծ:⁷³ 11-րդ հոդվածի համաձայն համապատասխան մարմինները կարող են պահանջել, որ անձը հաստատող փաստաթղթերը պարունակեն այդ անձի անվան հնչյունային տառադարձություն պաշտոնական լեզվով, եթե այն օտար տառատեսակներ է պարունակում: Սակայն, տառադարձությունը հնարավորինս ճշգրիտ պետք է լինի եւ պետք է տարանջատված չլինի տվյալ փոքրամասնության լեզվի կարեւոր տարրերից, ինչպիսիք, օրինակ, այբուբենը կամ քերականությունն են: Բացի դրանից, Խորհրդատվական կոմիտեն ակնկալում է, որ փոքրամասնությունների լեզուներով անունների պաշտոնական ճանաչման իրավունքը մշտապես լիարժեքորեն պահպանվի:⁷⁴ Նոր տեխնոլոգիաները հեշտացնում են ազգային փոքրամասնությունների տարբերակիչ (դիակրիտիկ) նշանների եւ այբուբենի գործածությունը: Ուստի, պետություններին խրախուսվում է օգտագործել բոլոր հասանելի տեխնիկական հնարավորությունները Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված իրավունքների մասով լիակատար եւ իրական երաշխիքներ տրամադրելու համար:⁷⁵

63. Խնդիրներ կարող են առաջանալ լեզվական ավանդույթների միջեւ հակասությունների պատճառով, օրինակ՝ ամուսնությունից հետո կանանց անունների համար ածանցը որոշելիս, ինչը կարող է վերաբերել նաեւ երեխաների անուններին: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է օրենսդրությունը, որը հնարավորություն է տալիս գրանցամատյաններում ազգանունները մուտքագրել առանց կանանց անուններին կցվող ածանցների, ինչը պահանջվում է մի շարք սլավոնական լեզուների քերականական կանոններով, եւ այն օրենսդրությունը, որը, հակառակը, թույլ է տալիս սլավոնական ածանցներ գործածել այն երկներում, որոնք սովորաբար նման պրակտիկա չունեն՝ հետեւելով ըստ սեռի անունների ձեւափոխման մասին կանոնին:⁷⁶

⁷² Լիտվայի վերաբերյալ առաջին եզրակացություն, Ուկրաինայի վերաբերյալ առաջին եզրակացություն:

⁷³ Լատվիայի վերաբերյալ առաջին եզրակացություն

⁷⁴ Ադրբեջանի վերաբերյալ առաջին եզրակացություն: Այս համատեքստում տե՛ս նաեւ ՄԱԿ-ի ՄԻԽ *Ռեյիման ընդդեմ Լատվիայի* որոշումը, որտեղ կոմիտեն գտնում է, որ Լատվիայի քերականության համաձայն անձնական անվան փոփոխությունը խախտել է «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի դրույթները:

⁷⁵ Ֆինլանդիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Լեհաստանի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁷⁶ Չեխիայի Հանրապետության վերաբերյալ առաջին եզրակացություն: Գերմանիայի վերաբերյալ երրորդ

2.2. Հանրության համար տեսանելի մասնավոր բնույթի տեղեկություններ

64. Գովազդներում եւ հայտարարություններում, ցուցանակներում եւ հանրության համար տեսանելի մասնավոր բնույթի այլ տեղեկություններում փոքրամասնության լեզվի (առանձին, կամ ի լրումն պաշտոնական լեզվի) գործածությունը անհարկի սահմանափակող դրույթները չեն համապատասխանում Շրջանակային կոնվենցիայի 11.2 հոդվածին: Այս կապակցությամբ, Խորհրդատվական կոմիտեն հիշատակում է, որ «մասնավոր բնույթ» արտահայտությունը Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդվածում վերաբերում է փոքրամասնության լեզվի արտահատման բոլոր ձեւերին, որոնք պաշտոնական չեն, ներառյալ, օրինակ, ցուցանակները, պաստառները կամ գովազդները: Խորհրդատվական կոմիտեն նաեւ ողջունում է միջոցները՝ ուղղված քարտեզներում փոքրամասնությունների լեզուների եւ պատմության նշանակության բարձրացմանը:⁷⁷

2.3. Հասարակական վայրերում տեղադրված ցուցանակներ

65. Շրջանակային կոնվենցիայի 11.3 հոդվածում նշվում է, որ իրավական դրույթ պետք է մշակվի՝ ըստ որի տեղագրական նշանները պետք է տեղադրվեն նաեւ փոքրամասնությունների լեզուներով այն տարածքներում, որտեղ ավանդաբար բնակվում են «ազգային փոքրամասնության պատկանող զգալի թվով անձինք»: Ուստի, այս պայմանները ավելի խիստ են, քան 10.2 հոդվածում նշվածները, քանի որ ըստ դրանց բնակավայրը պետք է լինի թե՛ ավանդական եւ թե՛ ունենա բնակիչների զգալի թվաքանակ: Ինչպես 10.2 հոդվածում, այստեղ նույնպես զգալի թիվը որոշելու համար նվազագույն տոկոս սահմանված չէ: Կողմ հանդիսացող պետությունները պետք է սահմանեն թափանցիկ ընթացակարգեր, որոնք ներառում են հստակ չափանիշներ, թե ինչ է նշանակում «զգալի», ինչպես, օրինակ՝ շեմերի ձեւով: Թեեւ պետություններն ունեն շեմը որոշելու որոշակի ազատություն, դրանից պետք է չօգտվել այնպես, որ դառնա անհամաչափ խոչընդոտ որոշակի փոքրամասնությունների լեզուների դեպքում: Օրինակ՝ Խորհրդատվական կոմիտեն գտել է, որ բացարձակ կամ հարաբերական մեծամասնության պահանջը քաղաքային, մունիցիպալ կամ տեղական համայնքներում մտահոգության առիթ է տվել Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդվածի հետ համապատասխանության առումով:⁷⁸ Սույն դրույթի համեմատաբար ճկուն ձեւակերպումը բխում է Կողմ հանդիսացող տարբեր պետություններում գոյություն ունեցող որոշակի հանգամանքները պատշաճ ձեւով հաշվի առնելու ցանկությունից: Բացի դրանից, 11.3

եզրակացություն:

⁷⁷ Գերմանիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

⁷⁸ Բուսնիայի եւ Հերցեգովինայի վերաբերյալ առաջին եզրակացություն: Լեհաստանի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

հողվածը նաեւ հաշվի է առնում, հարկ եղած դեպքում, առկա համաձայնագրերը այլ պետությունների հետ, սակայն պետությունների համար չսահմանելով նման համաձայնագրեր կնքելու պարտավորություն:⁷⁹

66. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է շեմերի նվազեցումը: Քանի որ Շրջանակային կոնվենցիայի 11.3 հոդվածը վերաբերում է այն տարածքներին, որոնք «ավանդաբար բնակեցված են եղել» ազգային փոքրամասնության պատկանող զգալի թվաքանակով անձանցով, տվյալ տարածքի դեմոգրաֆիկ կառուցվածքը պետք է հաշվի առնվի որոշակի ժամանակահատվածի կտրվածքով՝ ապահովելու համար, որ ասիմիլյացիայի վերջին միտումները չխոչընդոտեն փոքրամասնության լեզվի պահպանմանը:⁸⁰ Ուստի, իշխանությունները պետք է մեկնաբանեն եւ կիրառեն օրենսդրությունը ճկուն ձեւով՝ առանց շատ խստորեն առաջնորդվելով շեմի պահանջով:

67. Շրջանակային կոնվենցիայի 11.3 հոդվածը պահանջում է, որ փոքրամասնությունների լեզուներով ցուցանակների տեղադրումը ունենա հստակ եւ հասկանալի օրենսդրական հիմք:⁸¹ Բավարար չէ, որ այս գործելակերպը փաստացիորեն կիրառվի, բայց հիմնավորված չլինի օրենքով: Ճանապարհային երթեւեկության անվտանգությունը կամ տարբեր այբուբենների գործածությունը չեն կարող օգտագործվել որպես երկլեզու ցուցանակների դեմ փաստարկներ:⁸² Հակառակը, երկլեզու ցուցանակները պետք է տարածում ստանան, քանի որ դրանք ցույց են տալիս, որ տվյալ տարածքը ներդաշնակորեն զբաղեցնում են բնակչության տարբեր խմբեր:⁸³

⁷⁹ Տե՛ս Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան եւ բացատրական զեկույցը, , H(1995)010, 1990թ. Պարբերություն 70:

⁸⁰ Ավստրիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

⁸¹ Վրաստանի վերաբերյալ առաջին եզրակացություն:

⁸² Դանիայի վերաբերյալ առաջին եզրակացություն:

⁸³ Իտալիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

ՄԱՍ VI ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ**1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

68. Շրջանակային կոնվենցիայի 12-րդ հոդվածը պահանջում է, որ Կողմ հանդիսացող պետությունները պարտավորություն ստանձնեն բոլոր մակարդակներում կրթության հավասար հասանելիություն խթանելու ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար:⁸⁴ Լեզուն, սակայն, կարող է հանդիսանալ զգալի «միջանկյալ գործոն» եւ, ուստի, համարվել կարելու տարր կրթության բոլոր մակարդակների հասանելիության տեսանկյունից: Անբարենպաստ իրավիճակի եւ խտրականության կարող է հանգեցնել կրթության ոլորտից փոքրամասնությունների լեզուների բացառումը, փոքրամասնությունների լեզվով (լեզուներով) սովորելու հնարավորությունների բացակայությունը, լեզվի վրա հիմնված կամ որպես այդպիսին հիմնավորված «հատուկ դպրոցների» կամ «հատուկ դասարանների» տարանջատումը:⁸⁵ Նման դասարանների համար ուսումնական ծրագրերի շրջանակը, ծավալը եւ որակը կարող են հաճախ նվազեցվել՝ ի տարբերություն պաշտոնապես սահմանված ուսումնական ծրագրերի: Անբարենպաստ իրավիճակն ակնհայտ է դառնում գրագիտության խիստ ցածր մակարդակից, ընդունվողների փոքր եւ դպրոցից դուրս մնացողների մեծ թվաքանակից, դպրոցից հեռացման դեպքերից, ինչպես նաեւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ միջնակարգ եւ բարձրագույն կրթության հաստատություններում թերներկայացվածությունից: Թեեւ Խորհրդատվական կոմիտեն այս առնչությամբ հատկապես մտահոգված է գնչուների վիճակով, ներառական կրթության ռազմավարությունների զարգացումը պահանջում է համընդհանուր ուշադրություն:

69. Իշխանությունները պետք է հաշվի առնեն նաեւ դեմոգրաֆիկ զարգացումները, քանի որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք կարող են գաղթել ավանդական բնակավայրերից (տե՛ս 10.2 հոդվածին վերաբերող վերոնշյալ դիտողությունները): Փոքրամասնության լեզվով դպրոցների տեղական ցանցերի պահպանումը պետք է երաշխավորվի, իսկ ավանդական բնակավայրերից դուրս ապրող անձինք, երբ հնարավոր է եւ եթե նրանք զգալի թվաքանակով են ապրում այնտեղ, պետք է հնարավորություն ունենան ուսանելու իրենց լեզուն կամ իրենց լեզվով:⁸⁶ Քանի որ 14-րդ հոդվածում նշված պայմանների իրականացումը փոքրամասնության լեզվով կրթության պահանջի եւ որոշակի տարածքներում ազգային

⁸⁴ Խորհրդատվական կոմիտեն նվիրել է Շրջանակային կոնվենցիայի համաձայն իր առաջին թեմատիկ մեկնաբանությունը կրթությանը, տե՛ս 3-րդ ծանոթագրությունը

⁸⁵ Խորվաթիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Տե՛ս նաեւ Դ.Հ. եւ այլոք ընդդեմ Չեխիայի Հանրապետության, դիմում թիվ 57325/00, 2007 թվականի նոյեմբերի դատավճիռ, <http://www.echr.coe.int/echr>:

⁸⁶ Տե՛ս, օրինակ՝ Գերմանիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը, Ավստրիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը:

փոքրամասնության պատկանող անձանց բավարար թվաքանակի առումով կարող է տարբեր լինել, ուստի փոքրամասնության լեզվով կրթություն առաջարկելու ուղղությամբ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցները պետք է ճկուն ձեռով մշակված լինեն՝ յուրաքանչյուր իրավիճակին համապատասխանեցվելու համար:⁸⁷ Փոքրամասնությունների լեզուների դեպքում, որոնցով խոսում են միայն քիչ թվով անձինք, հատուկ կարիք կարող է լինել վերականգնելու լեզուն, օրինակ՝ առանձին դասարանների կամ լեզվի խորացված ուսուցման միջոցով: Տարբեր լեզուների գործառույթները եւ այդ լեզուները կրողների կարիքները, այսպիսով, պետք է գնահատվեն 14.2 հոդվածի համաձայն «պահանջարկը» որոշելու համար: Բացի դրանից, փոքրամասնության լեզվով ուսուցման պահանջների վերաբերյալ որոշումները պետք է կայացվեն արդարացիորեն, եւ մերժումները պետք է ենթակա լինեն իրավական բողոքարկման հնարավորության:⁸⁸ Փոքրամասնության լեզվի կրողների համայնքում լեզվական հմտությունները կարող են տարբերվել: Սակայն, անընդունելի է զրկել աշակերտներին փոքրամասնության լեզվով կրթության հասանելիությունից բացառապես նրանց ոչ բավարար լեզվական հմտությունների հիմքով:

2. ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԼԵՂՈՒ ԵՎ ԱՅԴ ԼԵՂՎՈՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԲԱՎԱՐԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Բաց եւ ներառական մոտեցում փոքրամասնությունների լեզուներին կրթության ոլորտում

70. Իշխանություններին խրախուսվում է սահմանել մանրամասն օրենսդրական երաշխիքներ ֆորմալ եւ ոչ ֆորմալ կրթության ոլորտում փոքրամասնությունների լեզուների պաշտպանության եւ զարգացման համար եւ պարբերաբար դիտանցել գործնականում իրավական դրույթների կիրառությունը: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն միջոցները, որոնցով 14-րդ հոդվածում պարունակվող երաշխիքները տարածվում են այլ խմբերի վրա, ինչպես նաեւ օրենսդրությունը, որում ներառված են փոքրամասնությունների հավելյալ լեզուների: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի թվով ավելի փոքր փոքրամասնությունների լեզուներին, ինչպես օրինակ բնիկ խմբերի լեզուներին, քանի որ դրանք հաճախ հատկապես վտանգված են:⁸⁹ Պետությունները պետք է նաեւ դիտարկեն երաշխիքներ տրամադրելու հարցը աշխարհագրորեն

⁸⁷ Տե՛ս նաեւ ACFC առաջին թեմատիկ մեկնաբանությունը կրթության մասին:

⁸⁸ Ուկրաինայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁸⁹ Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ երրորդ եզրակացություն (սահմանափակ օգտագործման համար):

սփռված փոքրամասնություններին եւ նրանց լեզուներին, ինչպիսին է գնչուերենը:⁹⁰

71. Խորհրդատվական կոմիտեն ընդունում է այն փաստը, որ փոքրամասնության լեզվով ուսուցումը հաճախ առաջարկվում է՝ ելնելով տեղական պահանջարկից եւ, ուստի, խրախուսում է պարբերաբար ուսումնասիրել այդ պահանջարկը: Իշխանությունների բացառապես պասիվ մոտեցումը, ուստի, համապատասխան արձագանք չէ. փոքրամասնության լեզվով կրթության պահանջարկը պետք է, իրականում, խթանվի ծնողների եւ երիտասարդների շրջանում իրազեկության բարձրացման եւ փոքրամասնության լեզվով ուսուցման առկա հնարավորությունների գովազդման միջոցով: Ազգային փոքրամասնությունների պատկանող ծնողները պետք է հնարավորություն ունենան տեղեկացված ընտրություն կատարելու իրենց երեխաների լեզվական կրթության հարցում:

72. Անձի՝ փոքրամասնության լեզուն սովորելու եւ զարգացնելու իրավունքը, ինչպես ներառված է Շրջանակային կոնվենցիայի 14.1 հոդվածում, կապված չէ միայն անձնական ինքնության պահպանման հետ, այլեւ կարեւոր հիմք է ծառայում անձի լեզվական ունակությունների զարգացման եւ այլ լեզուներին տիրապետելու համար:⁹¹ Փոքրամասնության լեզվով ուսանելու հնարավորությունը կարող է նաեւ կարեւոր գործոն հանդիսանալ կրթության հավասար հասանելիությունը ապահովելու եւ հասարակության մեջ լիարժեք եւ իրական մասնակցությանը նպաստելու տեսանկյունից: Այնուամենայնիվ, ինչպես շեշտված է 14.3 հոդվածում, հավասարապես կարեւոր է ձեռք բերել պաշտոնական լեզվի (լեզուների) բավարար իմացություն, քանի որ դրա պակասը լրջորեն սահմանափակում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ հասարակական կյանքին արդյունավետորեն մասնակցելու հնարավորությունները եւ կարող է խոչընդոտ հանդիսանալ համալսարանական կրթության հասանելիության առումով:⁹² Փոքրամասնության լեզուն կամ պաշտոնական լեզուն (լեզուները) սովորելու միջեւ մեկը մյուսին բացառող ընտրություն պետք է չլինի, եւ իշխանությունները պետք է խրախուսեն բազմալեզու եւ երկլեզու կրթության մոդելները, որոնք կգրավեն թե՛ մեծամասնությանը եւ թե՛ փոքրամասնությանը պատկանող երեխաների եւ կբավարարեն այն երեխաներին, որոնք մեծանում են երկլեզու միջավայրում կամ «խառը» ընտանիքներում:⁹³ Լեզվական բոլոր խմբերին, այդ թվում՝ մեծամասնությանը եւ փոքրամասնություններին, պատկանող ուսանողների համար հասու երկլեզու կամ բազմալեզու կրթությունը կարող է նպաստել միջմշակութային ընկալմանը եւ համագործակցությանը, բացի այն, որ ունի զգալի ճանաչողական առավելություններ անհատների

⁹⁰ Իսպանիայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁹¹ ԵԱՀԿ ԱՓՀԲՀ, Հաագայի առաջարկություններ, 1996թ.:

⁹² Տե՛ս, օրինակ՝ Վրաստանի վերաբերյալ առաջին եզրակացությունը:

⁹³ Սերբիայի եւ Մոնտենեգրոյի վերաբերյալ առաջին եզրակացություն: Նորվեգիայի վերաբերյալ առաջին եզրակացություն:

համար:

73. Փոքրամասնությունների լեզուները եւ այդ լեզուներով դասավանդելու եւ սովորելու հնարավորությունները տարբերվում են՝ ելնելով տեղի իրավիճակի որոշակի առանձնահատկություններից. երկլեզու կամ բազմալեզու դպրոցները կարող են առաջարկել փոքրամասնության լեզվով կրթություն պաշտոնական լեզվով կրթությանը զուգահեռ. փոքրամասնության լեզվով դասընթացները կարող են ներառվել հանրային կրթության համակարգում. կամ կարող են գործել փոքրամասնության լեզվով մասնավոր դպրոցներ կամ «Կիրակնօրյա դասընթացներ»՝ կազմակերպված համայնքների կողմից՝ հարեան երկրների կամ Կողմ հանդիսացող պետության աջակցությամբ, կամ առանց նման աջակցության:⁹⁴ Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է փոքրամասնությունների լեզուների ներառումը հանրային դպրոցների համակարգում եւ պարտադիր ուսումնական ծրագրում, այդ թվում՝ թվով ավելի փոքր փոքրամասնությունների լեզուները:⁹⁵ Դպրոցները պետք է առաջարկեն նաեւ գնչուերենի կամ գնչուերենով կրթություն, եթե դա անհրաժեշտ է: Այս համատեքստում հատուկ ուշադրություն է դարձվում Եվրոպայի խորհրդի կողմից մշակված՝ Գնչուերենի համար շրջանակային ուսումնական ծրագրին:⁹⁶ Բացի դրանից, Խորհրդատվական կոմիտեն նաեւ ողջունում է մասնավոր կամ համայնքային նախաձեռնությունները, որոնց աջակցում են իշխանությունները:

74. Մի շարք որոշակի խնդիրների կարելի է բխվել փոքրամասնության լեզվով ուսուցման հնարավորությունների առնչությամբ, ներառյալ փոքրամասնության լեզվի կամ լեզվով դասավանդման ժամերի անբավարար քանակությունը, կամ դասընթացների կազմակերպումը դպրոցի սովորական աշխատանքային ժամերից դուրս, փոքրամասնության լեզվով դասարանների ստեղծման համար սահմանված բարձր թվային շեմերը, ուսուցիչների եւ դասավանդման կամ ուսուցողական նյութերի պակաս, կամ գյուղական դպրոցների փակման կամ ձուլման հետեանքով դասարանների անբավարար առկայությունը: Սա 14.2 հոդվածի հետ համապատասխանության հարց է բարձրացնում, նույնիսկ այն դեպքերում, երբ փոխադրումը դեպի այլընտրանքային դպրոցներ կազմակերպվում եւ ֆինանսավորվում է իշխանությունների կողմից:⁹⁷ Մասնավորապես, փոքրամասնության ներկայացուցիչների հետ պետք է արդյունավետորեն խորհրդակցել կրթական բարեփոխումների կամ ապակենտրոնացման հետ կապված բոլոր փոփոխությունների մասին,

⁹⁴ Տե՛ս նաեւ ACFC առաջին թեմատիկ մեկնաբանությունը կրթության մասին:

⁹⁵ Հունգարիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Կիպրոսի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Խորվաթիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Լեհաստանի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

⁹⁶ Գնչուերենի շրջանակային ուսումնական ծրագիր, Լեզվական քաղաքականության բաժին, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, 2008 թվական՝ մշակված Գնչուների եւ թափառաշրջիկների եվրոպական ֆորումի հետ համագործակցությամբ:

⁹⁷ Գերմանիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

քանի որ դրանք հաճախ ուղղակիորեն կամ բացասաբար անդրադառնում են փոքրամասնության լեզվով դասավանդման վրա: Դպրոցներ ծուլման դեպքերում քայլեր կարող են ձեռնարկվել, օրինակ՝ տարբեր լեզուներով դասարանները կենտրոնացնել մեկ դպրոցում կամ մշակել երկլեզու կամ բազմալեզու դասավանդման մեթոդաբանություն՝ փոքրամասնությունների համայնքների վրա բացասական ազդեցությունները նվազեցնելու նպատակով:

75. Փոքրամասնության լեզվական հմտությունները՝ լեզվակիրների համար՝ փոքրամասնության պատկանող կամ ոչ, որպես ավելացված արժեք, զարգացնելու նպատակով, փոքրամասնությունների լեզուների եւ լեզուներով դասավանդման եւ ուսուցման հասանելիությունը պետք է լինի շարունակական կրթական համակարգի բոլոր մակարդակներում՝ նախադպրոցականից մինչեւ բարձրագույն եւ մեծահասակների համար կրթություն: Փոքրամասնության լեզվով կրթության բնագավառում որոշակի խնդիրներ են հաճախ նկատվում, նախադպրոցական, ինչպես նաեւ միջնակարգ մակարդակներով: Խթանող միջոցների բացակայությունը, կամ անբավարար հնարավորությունները նախադպրոցական, միջնակարգ կամ բարձրագույն մակարդակներում կարող են լրջորեն նվազեցնել փոքրամասնության լեզվով ուսուցման գրավչությունը նախնական մակարդակում: Առանձնակի խոչընդոտ են իրենցից ներկայացնում նաեւ ավագ դպրոցի ավարտական կամ համալսարանի ընդունելության քննությունները, որոնք անց են կացվում միայն պաշտոնական լեզվով, քանի որ դրանք կարող են նվազեցնել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հնարավորությունները բարձրագույն կրթություն ստանալու եւ, այդպիսով, բացասաբար անդրադառնալ նրանց հետագա մասնագիտական հնարավորությունների վրա: Քանի որ համալսարանի ընդունելության քննությունները սովորաբար չեն մշակվում բազմալեզվությունը հաշվի առնելով եւ հարմարեցված չեն փոքրամասնության լեզվի կրողների կարիքներին եւ հմտություններին, դրանք կարող են ետ պահել փոքրամասնությունների լեզուների համալսարանական ուսուցումից մասնագիտացման ամենաբարձր մակարդակներում: Սա իր հերթին նվազեցնում է փոքրամասնության լեզվի ճանաչումը եւ գործառնական հատկանիշները հասարակական կյանքում: Ի հակառակ, Խորհրդատվական կոմիտեն բազմիցս ողջունել է համալսարանական կրթության հասանելիությունը փոքրամասնության լեզուներով՝ որպես երկրում փոքրամասնությունների լեզուների զարգացմանը եւ վարկի բարձրացմանը կարելի ներդրում:⁹⁸

⁹⁸ Տե՛ս, օրինակ, Ռումինիայի վերաբերյալ երրորդ եզրակացությունը (սահմանափակ օգտագործման համար):

2.2. Կրթական իրավունքների լիարժեք իրականացմանը օժանդակող միջոցներ

76. Փոքրամասնության լեզվի եւ այդ լեզվով կրթության որակը երաշխավորելու նպատակով համապատասխան դպրոցական ուսումնական ծրագիր եւ ստանդարտներ պետք է մշակվեն, եւ դասավանդման մեթոդաբանությունը, ինչպես նաեւ նյութերը պետք է համապատասխանեցվեն: Փոքրամասնությունների լեզվի եւ այդ լեզվով կրթության որակը երաշխավորելու համար, սակայն, առանձնակի կարեւոր է ուսուցիչների վերապատրաստումը: Չափազանց կարեւոր է, որ բավարար թվով փոքրամասնությունների լեզուներով աշխատող ուսուցիչներ կրթվեն, եւ որ նման վերապատրաստումը լինի պատշաճ որակի, պատրաստի ուսուցիչներ կրթության բոլոր մակարդակների համար, այդ թվում՝ նախակրթական կամ մանկապարտեզի մակարդակների: Շատ իրավիճակներում այս ուսուցիչներից պահանջվում է աշխատել երկլեզու կամ եռլեզու միջավայրերում: Գիտակցելով նման միջավայրերում աշխատելու ունակ փոքրամասնության լեզվով ուսուցիչներ հավաքագրելու եւ նրանց վերապատրաստելու դժվարությունները՝ Խորհրդատվական կոմիտեն ողջունում եւ խրախուսում է ժամանակակից եւ ինտերակտիվ մեթոդաբանությունների մշակումը, որոնք համապատասխանում են բազմալեզու դասավանդման միջավայրերին:

77. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ փոքրամասնությունների լեզուներով դասագրքերի առկայությունը աշակերտների եւ ծնողների շրջանում փոքրամասնության լեզվով ուսանելու հետաքրքրություն առաջացնելու նախապայման է եւ որակյալ կրթություն տրամադրելու անբաժանելի տարր: Գիտակցելով քիչ տարածում ունեցող նյութերի հրատարակման մեծ ծախսերը՝ Խորհրդատվական կոմիտեն, այնուամենայնիվ, գտնում է, որ նման նյութերը պետք է լինեն անվճար, կամ առնվազն ոչ ավելի թանկ քան մեծամասնության լեզուներով նյութերը: Հատկապես միջնակարգ կրթության մակարդակում հաճախ դասավանդման նյութերի առավել համատարած պակաս է առկա: Քանի որ կարելի է, որ բովանդակությունը եւ լեզվի օգտագործումը համապատասխանեցվեն փոքրամասնության տվյալ խմբի հատուկ կարիքներին, այդ թվում՝ տեխնիկական առարկաների համար փոքրամասնության լեզվի որոշակի տերմինների առումով, ուստի առաջնություն պետք է տրվի այդ երկրում հրատարակված նյութերին: Հարեան պետություններում մշակված նյութերը կարող են նույնպես հաստատվել եւ անհրաժեշտության դեպքում՝ տրամադրվել:⁹⁹ Այսպիսի համագործակցությունը հստակորեն խրախուսվում է Շրջանակային կոնվենցիայի 17-րդ հոդվածով: Սակայն, ուշադրություն պետք է դարձնել ռիսկերին, որոնց դա կարող է հանգեցնել՝ կապված զուգահեռ կրթական համակարգերի առաջացման հետ, որոնք կարող են վտանգել սոցիալական համախմբվածությունը:¹⁰⁰

78. Բացի դրանից, խրախուսվում են միջոցները՝ ուղղված աշակերտներ գրավելուն փոքրամասնության լեզուն կամ լեզվով սովորելու համար, ինչպիսիք են, օրինակ՝ համալսարանում տեղեր պահելը կամ սահմանափակող քվոտաները վերացնելը:¹⁰¹ Փոքրամասնությունների լեզուների եւ լեզվական սովորույթների վերաբերյալ հետազոտությունը հատուկ դեր ունի խաղալու՝ որակյալ դասավանդումը, ինչպես նաեւ ուսուցման մեթոդները եւ նյութերը զարգացնելուն նպատակաուղղված: Այն հավասարապես կարելի է տերմինաբանության մշակման, մեկնաբանման եւ թարգմանության համար: Այս բնագավառում, իշխանություններին խրախուսվում է հատուկ ուշադրություն դարձնել թվով ավելի փոքր կամ սփռված փոքրամասնությունների լեզուներին, որոնք գտնվում են կողիֆիկացման փուլում:¹⁰² Այս համատեքստում ուշադրություն պետք է դարձվի այն փաստին, որ կողիֆիկացման գործընթացը «չսառեցնի» լեզուն եւ որ լեզվակիրների կարծիքները պահպանեն իրենց կենտրոնական դերը լեզուն հասկանալու հարցում:

⁹⁹ Կիպրոսի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Խորվաթիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

¹⁰⁰ Բոսնիայի եւ Հերցեգովինայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

¹⁰¹ Գերմանիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

¹⁰² Նորվեգիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

2.3 Կրթության ոլորտում մեծամասնության եւ փոքրամասնությունների լեզուների միջեւ հավասարակշռություն

79. Շրջանակային կոնվենցիայի 12-րդ հոդվածով պահանջվում է կոնկրետ միջոցներ ձեռնարկել փոքրամասնությունների եւ մեծամասնության լեզուների մասին գիտելիքներ զարգացնելու համար: Լեզուն կարելի է խաղում ինտեգրումը, խմբերի միջեւ փոխադարձ հարգանքը եւ սոցիալական համերաշխությունը խթանելու հարցում: Սա ենթադրում է ոչ միայն լեզվական կրթություն տրամադրելը ազգային փոքրամասնությունների համայնքների անդամներին, այլեւ փոքրամասնությունների լեզուների մասին եւ այդ լեզուների կրթություն՝ ի շահ մեծամասնության լեզվի կրողների եւ ամբողջ հասարակության: Մեծամասնության լեզվի կրողների համար փոքրամասնությունների լեզուները սովորելու հնարավորությունը, եւ հատկապես երկլեզու եւ բազմալեզու կրթական հաստատություններ հաճախելու հնարավորությունները բոլորի համար կարող են բարելավել միջմշակութային փոխըմբռնումը եւ համագործակցությունը:¹⁰³ Տկյանս կրթության իմաստով, սրա մաս է կազմում նաեւ մեծահասակների կրթությունը: Եթե պետությունները միջոցներ են ձեռնարկել պաշտոնական լեզուն (լեզուները) զարգացնելու համար, ապա հատկապես կարելի է, որ դրանց զուգահեռ պաշտպանվեն եւ զարգացվեն փոքրամասնությունների լեզուները, քանի որ հակառակ դեպքում նման գործելակերպը կարող է հանգեցնել ասիմիլյացիայի եւ ոչ թե ինտեգրման:

80. Մյուս կողմից՝ պաշտոնական լեզվի (լեզուների) անբավարար իմացությունը կարող է սահմանափակել հասարակության մեջ հավասար մասնակցության, բարձրագույն կրթության հասանելիության եւ աշխատանքի մատչելիության հնարավորությունները: Արդյունքում, ծնողները կարող են նախընտրել իրենց երեխաներին ընդունել ընդհանուր դպրոցներ, քանի որ դրանք, թվում է, հասարակության մեջ ինտեգրվելու եւ շահութաբեր աշխատանք գտնելու ավելի լավ հնարավորություններ են տալիս: Ուստի, փոքրամասնության լեզվով դպրոցները պետք է համապատասխանաբար զարգացնեն լեզվակիրների՝ պետական լեզվի (լեզուների) իմացությունը: Սակայն, այս առումով պետք է ուշադիր լինել կանխելու համար ընդհանուր կրթական մակարդակի անկումը այնպիսի քաղաքականությունների հետեւանքով, որոնք հանկարծակի ներմուծում են պաշտոնական լեզվի առավել խոր ուսուցում: Սա կարող է ռիսկային լինեն, երբ փոքրամասնության լեզվով դասավանդող ուսուցիչները ստիպված են դասավանդել պաշտոնական լեզվով՝ առանց պատշաճ աջակցության եւ նախապատրաստության:¹⁰⁴ Փոքրամասնության լեզվով դպրոցներում պաշտոնական լեզվի ավելի խորացված դասավանդումը խթանող կրթության ոլորտի բարեփոխումները պետք է իրականացվեն աստիճանաբար եւ ճկուն կերպով՝ համապատասխան

¹⁰³ Տե՛ս, ACFC առաջին թեմատիկ մեկնաբանությունը կրթության մասին:

¹⁰⁴ Էստոնիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

ուսուցիչների եւ աշակերտների կարիքներին հարմարեցնելու հնարավորություն տալու համար: Այս համատեքստում կարելի է պարբերաբար դիտանցել տրամադրվող կրթության որակը բարեփոխումների ողջ ընթացքում: Դա պետք է իրականացվի դպրոցի խորհրդի, ուսուցչական եւ ծնողական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մանրամասն խորհրդակցության արդյունքում:

81. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է երկլեզու եւ բազմալեզու դասավանդման մոդելների մշակումը՝ որպես պարտադիր դպրոցական ուսումնական ծրագրի մաս:¹⁰⁵ Լավագույն դեպքում, եթե իրավիճակը թույլ է տալիս, երկլեզու կրթության մոտեցումներ կարող են որդեգրվել, որոնց դեպքում փոքրամասնությունների եւ մեծամասնության լեզուները առկա են հավասարաչափ: Որոշակի իրավիճակներում, սակայն, կարող է նաեւ օգտակար լինել այս կամ այն լեզուն զարգացնելը՝ լեզուների վարկանիշների միջեւ տարբերությունները հակակշռելու, թվով ավելի փոքր փոքրամասնությունների լեզուների կրողների իրավունքները երաշխավորելու եւ ծնողների եւ երեխաների իրավաչափ պահանջները բավարարելու համար, որոնք պաշտպանված են Շրջանակային կոնվենցիայով: Երկլեզու կրթության մոտեցումները կարող են ծառայել իրենց նպատակին ըստ շաբաթվա օրերի կամ առարկաների՝ լեզուների հերթագայության կամ մեկ ուսուցիչ՝ մեկ լեզու մոդելի կիրառության միջոցով: Եթե լեզուն որոշվում է ըստ առարկայի, փոքրամասնությունների լեզուները չպետք է սահմանափակվեն մշակութային կամ պատմական առարկաներով միայն: Խորհրդատվական կոմիտեն առաջարկում է, որ իշխանությունները, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց հետ մանրամասն խորհրդակցելու արդյունքում, մշակեն համապարփակ երկարաժամկետ ռազմավարություն կրթական քաղաքականություններում մի քանի լեզուների զարգացումը խթանելու համար:¹⁰⁶

2.4 Լեզվական բազմազանության եւ միջմշակութային կրթության խթանում

82. Դպրոցական կրթությունը պետք է համարժեքորեն արտացոլի հասարակության՝ լեզվական եւ մշակութային բազմազանությունը եւ դրանով խթանի հանդուրժողականության, միջմշակութային երկխոսության եւ փոխադարձ հարգանքի արժեքները: Բացի փոքրամասնությունների լեզուների եւ այդ լեզուներով դասավանդումից, պարտադիր ուսումնական ծրագիրը պետք է, այսպիսով, նաեւ ներառի տեղեկություններ պատմության եւ Կողմ հանդիսացող պետության մշակութային ժառանգությանը եւ հասարակությանը փոքրամասնությունների ունեցած ներդրման մասին: Նման առարկաների դասավանդումը պետք է չսահմանափակվի ազգային

¹⁰⁵ Հունգարիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Շվեդիայի վերաբերյալ առաջին եզրակացություն: Շվեյցարիայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

¹⁰⁶ Տե՛ս նաեւ ACFC առաջին թեմատիկ մեկնաբանությունը կրթության մասին:

փոքրամասնությունների կողմից ավանդաբար բնակեցված տարածքներով, որպեսզի հասարակության լեզվական բազմազանության մասին իրազեկվածությունը եւ դրա նկատմամբ հարգանքը խթանվի ամբողջ երկրի տարածքում՝ փոքր տարիքից: Այս համատեքստում Խորհրդատվական կոմիտեն ողջունում է պատմության եւ աշխարհագրության դասավանդման ժամանակ քարտեզների կիրառությունը, որոնց վրա երեւում են ազգային փոքրամասնությունների համար պատմական կարեւորություն ունեցող տարածքները եւ տեղանքների անունները նշված են փոքրամասնությունների լեզուներով: Բացի դրանից, այն ընդգծել է պատմությունը մի քանի տեսանկյուններից դասավանդելու կարեւորությունը:¹⁰⁷

83. Սոցիալական համախմբվածության առումով, Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այլ համայնքներից երեխաներին այնպիսի դպրոցներում ներգրավելու նախաձեռնությունները, որոնցում դասավանդման եւ ուսուցման միջոց են հանդիսանում փոքրամասնությունների լեզուները, ինչպես նաեւ այն միջոցները, որոնք խրախուսում են միջմշակութային եւ անդրսահմանային շփումները եւ խթանում են լեզվի ուսուցումը մասնակի կամ ամբողջական խորացման ծրագրերի միջոցով: Նման միջմշակութային մոտեցումներ մշակելիս՝ կարեւոր է, որ ոչ միայն կրթության համակարգի կառուցվածքի (բազմազանեցված դասընթացների, դպրոցների եւ դպրոցի վարչական խորհրդի միջոցով), այլեւ կրթության բովանդակության միջոցով խթանվեն փոխադարձ հարգանքի եւ միջէթնիկ փոխըմբռնման արժեքները՝ հաշվի առնելով ինքնության այլ տարրերը, ինչպիսիք են կրոնը, աշխարհագրական տեղանքը կամ սեռը:¹⁰⁸

¹⁰⁷ Էստոնիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

¹⁰⁸ Տե՛ս նաեւ ACFC առաջին թեմատիկ մեկնաբանությունը կրթության մասին:

ՄԱՍ VII ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

84. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ հանրային քաղաքականության բնագավառում գործուն մասնակցության իրավունքը, ինչպես ներառված է 15-րդ հոդվածում, համարվում է Շրջանակային կոնվենցիայի կենտրոնական դրույթ, որին Խորհրդատվական կոմիտեն նվիրել է իր երկրորդ թեմատիկ մեկնաբանությունը:¹⁰⁹ Գործուն մասնակցությունը որոշիչ դեր ունի Շրջանակային կոնվենցիայով պաշտպանված այլ իրավունքներից լիարժեքորեն օգտվելու հարցում, նպաստում է միջմշակութային երկխոսությանը եւ խթանում է սոցիալական համախմբվածությունը: Մասնակցության այս բոլոր տարրերը, սակայն, կարող են խնդրահարույց լինել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար իրենց լեզվական սահմանափակումների պատճառով: Լեզվական իրավունքների եւ մասնակցության մասին սույն գլուխը, ուստի, բարձրացնում է այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են նաեւ սույն թեմատիկ մեկնաբանության այլ գլուխներին, եւ ինչպիսիք են հավասարության եւ խտրականության բացառման, հրապարակայնորեն փոքրամասնության լեզուն գործածելու, ինչպես նաեւ փոքրամասնության եւ պաշտոնական լեզուներով եւ լեզուները սովորելու հարցերը:

85. Լեզվի եւ լեզվական օրենսդրության հարցերը հաճախ կենտրոնական նշանակություն ունեն փոքրամասնությունների համայնքների համար եւ կարող են հասարակության մեջ լարվածության պատճառ դառնալ: Ուստի, համաձայնություն պետք է ձեռք բերվի երկու հավասարապես կարելու նպատակների շուրջ՝ փոքրամասնությունների լեզուների գործածության երաշխիքներ եւ հարգանք դրանց նկատմամբ, մի կողմից, եւ սոցիալական համախմբվածություն՝ մյուս կողմից: Սոցիալական համախմբվածության գաղափարը հաճախ ակնարկներ է պարունակում մեկ հիմնական պաշտոնական լեզվին: Խորհրդատվական կոմիտեն առանձին երկրների համար մի շարք եզրակացություններում կրկին նշել է պաշտոնական լեզուն զարգացնելու նպատակի իրավաչափության մասին, քանի որ այն շատ կարելու դեր է խաղում համախմբված հասարակություն կառուցելու եւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ հասարակական կյանքում գործուն մասնակցությունը խրախուսելու հարցերում: Պաշտոնական լեզվի իմացությունը խթանում է որպես երկրի բնակիչ եւ ակտիվ քաղաքացի գիտակցության ձեւավորումը եւ, ուստի, անփոխարինելի է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար հասարակական կյանքում գործուն մասնակցություն ցուցաբերելու առումով: Մյուս կողմից, եւ ինչպես վերը նշվեց, պաշտոնական լեզվի սահուն իմացությունը եւ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար նախատեսված որոշակի լեզվական

¹⁰⁹ ACFC երկրորդ թեմատիկ մեկնաբանությունը մշակութային, սոցիալական եւ տնտեսական կյանքում, ինչպես նաեւ հանրային քաղաքականության բնագավառում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց գործուն մասնակցության մասին, տե՛ս 4-րդ ծանոթագրությունը

իրավունքներից օգտվելը միմյանց չեն բացառում: Պաշտոնական լեզվի գործածությունը ամրապնդելու բոլոր ծրագրերը կամ միջոցները պետք է քննարկվեն ժամանակին եւ հանրային խորհրդակցության ընթացքում: Սա պետք է ներառի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը՝ ապահովելու համար, որ փոքրամասնության լեզվական իրավունքները արդյունավետորեն պաշտպանված են:

1. ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

86. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք հաճախ բախվում են առավել զգալի դժվարությունների, քան ուրիշները՝ կապված աշխատանքի շուկայի, կրթության եւ վերապատրաստման, բնակարանային քաղաքականության, առողջապահության եւ այլ սոցիալական ծառայությունների մատչելիության հետ: Այս դժվարությունները, այլ խոչընդոտների շարքում՝ հաճախ լեզվական սահմանափակումների պատճառ հանդիսացող, կապված են պաշտոնական լեզվի անբավարար իմացության հետ:¹¹⁰ Իրավիճակը կարող է անգամ ավելի վատ լինել ազգային փոքրամասնությունների պատկանող այն անձանց համար, որոնք փոքրամասնության լեզվով ցածրորակ ուսուցման հնարավորությունների պատճառով ավարտում են փոքրամասնության լեզվի սահմանափակ հմտություններով եւ առանց պաշտոնական լեզվի իմացության: Շատ դեպքերում պետական լեզվի բարձրակարգ դասավանդումը եւ պաշտոնական լեզվի լավ իմացությունը մշակութային, սոցիալական եւ տնտեսական կյանքում գործուն մասնակցության նախապայման է: Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար պաշտոնական լեզվի ուսուցումն, այսպիսով, պետք է խթանվի բոլոր տարիքային խմբերի համար, ներառյալ նրանց, ովքեր արդեն հանրային կամ մասնավոր հատվածում աշխատանք ունեն: Հատկապես, այն պետություններում, որտեղ ներմուծվել են նոր պաշտոնական լեզուներ, իշխանությունները պետք է շահագրգռեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց սովորել նոր պաշտոնական լեզուն, օրինակ՝ առաջարկելով կարիերայի հնարավորություններ այն անձանց համար, որոնք խոսում են պաշտոնական եւ փոքրամասնությունների լեզուներով:

87. Պաշտոնական լեզվի (լեզուների) իմացության չափազանց խիստ պահանջները՝ որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի ապրանքներ եւ ծառայություններ ձեռք բերելու համար ներկայացվող, կարող են, սակայն, անհարկի սահմանափակել աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության հասանելիությունը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց

¹¹⁰ Տե՛ս, օրինակ՝ Վրաստանի վերաբերյալ առաջին եզրակացությունը:

համար:¹¹¹ Ուստի, Կողմ հանդիսացող պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն վերացնելու համար աշխատանքի շուկա մուտք գործելու անհամաչափ սահմանափակումները: Ինչ վերաբերում է պաշտոններին, որոնց դեպքում պաշտոնական լեզվի լավ իմացությունը իրավաչափ պայման է, լեզվի իմացության պահանջները պետք է յուրաքանչյուր դեպքում համաչափ լինեն հետապնդվող հանրային շահին, եւ պետք է չլինեն ավելին, քան անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար: Բացի դրանից, լեզվի վերապատրաստման դասընթացներ եւ, անհրաժեշտության դեպքում՝ թիրախային աջակցություն պետք է հասանելի լինի նախքան լեզվին ներկայացվող պահանջները կիրառելը՝ նպատակ հետապնդելով խթանել պաշտոնական լեզվի ուսուցումը եւ կանխել խտրականությունը կամ ազգային փոքրամասնությունների պատկանող դիմողների կամ աշխատակիցների անբավարար մասնակցությունը:¹¹²

88. Սոցիալական արտոնությունների եւ որոշ հանրային ծառայությունների եւ կենցաղսպասարկման հասանելիությունը պետք է չխոչընդոտվի լեզվին կամ բնակությանը ներկայացվող անհարկի պահանջներով:¹¹³ Հանրային ծառայությունների եւ սոցիալական ապահովության ինստիտուտների մասին տեղեկատվությունը եւ խորհրդատվությունը պետք է հեշտ հասանելի եւ առկա լինեն, անհրաժեշտության դեպքում՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով:¹¹⁴ Ազգային փոքրամասնությունների պատկանող զգալի թվով անձանցով բնակեցված տարածքներում առողջապահական ծառայությունների եւ ծերերի խնամքի ոլորտներում աշխատող բժշկական եւ վարչական անձնակազմը պետք է կարողանա ծառայություններ մատուցել փոքրամասնությունների լեզուներով եւ պետք է ազգային փոքրամասնությունների մշակութային եւ լեզվական առանձնահատկությունների մասին վերապատրաստում անցնի, որպեսզի պատշաճ կերպով արձագանքի նրանց որոշակի կարիքներին: Այս համատեքստում խորհրդատվական կոմիտեն նկատել է, որ տեղական իշխանությունները պետք է ակտիվ կերպով փորձեն աշխատանքի ընդունել համապատասխան որակավորմամբ աշխատակիցների, որոնք ունեն անհրաժեշտ լեզվական գիտելիքներ:¹¹⁵ Բացի դրանից, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցից առողջապահության ոլորտի միջնորդներ կամ օգնականներ (կամ առնվազն փոքրամասնության լեզվով խոսող թարգմանիչներ) վարձելը կարող է նպաստել հաղորդակցության բարելավմանը:¹¹⁶

¹¹¹ Տե՛ս, օրինակ՝ Ադրբեջանի վերաբերյալ առաջին եզրակացությունը:

¹¹² Տե՛ս ACFC երկրորդ թեմատիկ մեկնաբանությունը գործուն մասնակցության վերաբերյալ

¹¹³ Նույնը

¹¹⁴ Նույնը: Դանիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

¹¹⁵ Էստոնիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Շվեդիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն (գաղտնի):

¹¹⁶ Տե՛ս ACFC երկրորդ թեմատիկ մեկնաբանությունը գործուն մասնակցության վերաբերյալ

89. Ավելին, Կողմ հանդիսացող պետությունները պետք է խթանեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց եւ (կամ) ազգային փոքրամասնությունների լեզվով (լեզուներով) խոսող անձանց աշխատանքի ընդունումը, նրանց առաջխաղացումը եւ աշխատանքի հարատեւության ապահովումը վարչական եւ հանրային ծառայությունների ոլորտում՝ թե պետական եւ թե տեղական մակարդակներում: Էական է, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց եւ (կամ) փոքրամասնությունների լեզվով (լեզուներով) խոսող անձանց գործուն մասնակցությունն ապահովվի վարչական մարմիններում, ներառյալ ոստիկանությունը եւ դատական համակարգը՝ նպատակ հետապնդելով փոքրամասնությունների լեզուները իշխանությունների հետ հարաբերություններում օգտագործելու իրավունքը դարձնել արդյունավետ: Ավելին, փոքրամասնությունների լեզուների բավարար առկայությունը հանրային եւ պաշտոնական կյանքում օգնում է ապահովել, որ բարձրանա կամ պահպանվի փոքրամասնության լեզվի համապատասխան վարկը՝ ազգային փոքրամասնությունների, ինչպես նաեւ մեծամասնությանը պատկանող երիտասարդների շրջանում գրավիչ ուսուցման նպատակ հանդիսանալու համար: Այդ նպատակով փոքրամասնության լեզվի լավ իմացությունը պետք է մշտապես համարվի արժեք, իսկ ավանդական բնակության վայրերում՝ նույնիսկ պահանջ՝ քաղաքացիական ծառայության ոլորտում աշխատանքի հավաքագրման ընթացակարգերում:

2. ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԳՈՐԾՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

90. Խորհրդատվական կոմիտեն ընդունում է, որ դաշնային կառուցվածքը, ապակենտրոնացումը եւ ինքնավարության տարբեր ռեժիմները կարող են շահավետ լինել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար:¹¹⁷ Մշակութային ինքնավարության հարաբերությունները, օրինակ՝ կարող են նպատակաուղղվել ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին պատվիրակելու կարեւոր իրավասություններ փոքրամասնությունների մշակույթի, լեզվի կամ կրթության ոլորտներում: Նման հարաբերությունների առկայության դեպքում սահմանադրական եւ օրենսդրական դրույթներով պետք է հստակ սահմանվի ինքնավար համակարգի բնույթը եւ շրջանակը: Համապատասխան պետական ինստիտուտների միջեւ հարաբերությունները, ինչպես նաեւ դրանց ֆինանսավորման համակարգը, պետք է հստակեցվի օրենքով:¹¹⁸ Կառավարության տարբեր մակարդակների միջեւ պարտականությունների բաշխումը չի կարող օգտագործվել որպես հիմնավորում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար իրենց մշակույթը եւ լեզուն զարգացնելու պայմանների ապահովմանն ուղղված

¹¹⁷ Տե՛ս նաեւ ԵԱՀԿ ԱՓՀԲՀ Լուինդի առաջարկությունները, 1999 թվական:

¹¹⁸ Տե՛ս ACFC երկրորդ թեմատիկ մեկնաբանությունը գործուն մասնակցության մասին:

քաղաքականությունները չիրականացնելու համար, քանի որ կենտրոնական կառավարությունը շարունակում է լինել լիովին պատասխանատու այս ոլորտում իր միջազգային պարտավորությունների, այդ թվում՝ Շրջանակային կոնվենցիայում ներառված պարտավորությունների համար:¹¹⁹

91. Վարչական սահմանները փոփոխելուն նպատակաուղղված բարեփոխումներ դիտարկելիս, իշխանությունները պետք է խորհրդակցեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ, որպեսզի նրանք կարողանան հաշվի առնել նման բարեփոխումների հնարավոր ազդեցությունը իրենց լեզվական իրավունքների իրականացման վրա: Ցանկացած դեպքում, միջոցներ պետք է չձեռնարկվեն, որոնց նպատակն է կրճատել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում բնակչության տոկոսը կամ սահմանափակել Շրջանակային կոնվենցիայով պաշտպանված իրավունքները: Որոշ երկրներում Խորհրդատվական կոմիտեն դիտարկել է բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց իրավիճակը, որոնք բնակվում են երկրի այն տարածքներում, որտեղ իրենք կազմում են փոքրամասնություն: Խորհրդատվական կոմիտեի կարծիքով, այս, այսպես կոչված, «փոքրամասնության մեջ մեծամասնություն» կազմող անձանց լեզվական իրավունքների համար պահանջում են նմանատիպ պաշտպանական միջոցներ, ինչպիսիք տրվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց:¹²⁰ Այն, օրինակ՝ գտել է, որ նման իրավիճակներում պետք է կիրառվեն նվազեցված շեմեր յուրաքանչյուր դասարանում աշակերտների նվազագույն թվաքանակի առումով, ինչպիսիք կիրառվում են փոքրամասնությունների լեզվով դպրոցներում, որպեսզի «փաստացի» փոքրամասնության լեզվով եւ այդ լեզվի դասավանդումն արդյունավետ լինի:¹²¹

92. Կողմ հանդիսացող պետությունները պետք է ապահովեն, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց ներկայացնող կամ նման անձինք ընդգրկող քաղաքական կուսակցությունները հավասար հնարավորություններ ունենան ընտրարշավների ժամանակ: Սա կարող է ենթադրել փոքրամասնությունների լեզուներով ընտրական պաստառների ցուցադրում: Իշխանությունները պետք է նաեւ դիտարկեն ընտրարշավներին նվիրված հանրային հեռուստատեսության եւ ռադիո ծրագրերում եւ ընտրաթերթիկների եւ ընտրական այլ նյութերի վրա փոքրամասնությունների լեզուների գործածության հնարավորությունների հարցը ավանդաբար կամ զգալի թվաքանակով ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում: Խորհրդարանական եւ տեղական ընտրություններում թեկնածուների

¹¹⁹ Իտալիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն:

¹²⁰ Նմանատիպ մոտեցում պետք է ցուցաբերվի նաեւ «փոքրամասնության մեջ փոքրամասնություն» իրավիճակներում:

¹²¹ Ֆինլանդիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Էստոնիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Ռումինիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն (գաղտնի):

համար սահմանված լեզվի լավ իմացության պահանջները կարող են խնդրահարույց լինել Շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածի հետ համապատասխանության առումով, քանի որ դրանք բացասաբար են անդրադառնում հանրային քաղաքականության բնագավառում ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցության վրա:¹²² Մասնավորապես, տեղական մակարդակով ընտրված մարմինների շրջանակում փոքրամասնությունների լեզուների գործածության հնարավորությունը կարող է հնարավորություն տալ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց առավել գործուն կերպով մասնակցելու որոշումների ընդունման գործընթացում: Խորհրդատվական կոմիտեն ողջունել է քայլերը՝ ուղղված հանրային կառավարման համակարգի ներսում փոքրամասնությունների լեզուների գործածությունը թույլատրելուն այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնությունների պատկանող զգալի թվաքանակով անձանցով:¹²³

93. Փոքրամասնությունների լեզուները ազատորեն, բանավոր եւ գրավոր ձեով, անձնական կյանքում եւ հրապարակորեն, ինչպես նաեւ վարչական մարմինների հետ հարաբերություններում գործածելու իրավունքը նաեւ կարելի է գործուն է, որը խթանում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը հանրային քաղաքականությանը, մասնավորապես այն տարածքներում, որտեղ ավանդաբար կամ զգալի թվաքանակով ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք են բնակվում: Վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուների գործածության հնարավորությունը հաճախ կարող է նպաստել ազգային փոքրամասնությունների վրա անմիջականորեն ազդող խնդիրների վերաբերյալ ավելի արդյունավետ երկխոսությանը, մինչդեռ միայն պետական լեզվի (լեզուների) գործածությունը կարող է լրջորեն խոչընդոտել նրանց հետ խորհրդակցելու հնարավորությանը եւ նրանց մասնակցությանը: Այդ պատճառով կարելի է ապահովել, որ փոքրամասնությունների համայնքների համար իրականացվեն անհրաժեշտ բացատրական եւ թարգմանչական աշխատանքներ, երբ, օրինակ, քննարվում են համապատասխան օրենսդրական նախագծեր երաշխավորելու համար, որ նրանք գործուն հնարավորություն ունենան իրենց մտահոգություններն արտահայտելու: Բացի դրանից, երաշխիքներ պետք է գործեն ապահովելու համար, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար նախատեսված խորհրդակցական մեխանիզմները, ինչպես օրինակ խորհրդատվական խորհուրդները, պատշաճ կերպով քննեն փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից կատարված լրացումները եւ արդյունավետ կերպով հաշվի առնեն դրանք որոշումների ընդունման գործընթացում:

¹²² Վրաստանի վերաբերյալն առաջին եզրակացություն:

¹²³ Էստոնիայի վերաբերյալ երրորդ եզրակացություն: Ուկրաինայի վերաբերյալ երկրորդ եզրակացություն:

ՄԱՍ VIII ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

94. Վավերացնելով Շրջանակային կոնվենցիան՝ Կողմ հանդիսացող պետությունները համաձայնել են «նպաստել այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրենց մշակույթը պահպանելու եւ զարգացնելու եւ իրենց ինքնության կարեւոր տարրերը պահպանելու համար», այդ թվում՝ լեզուն: Սույն Մեկնաբանությամբ քննության է առնվում Խորհրդատվական կոմիտեի՝ Շրջանակային կոնվենցիայի՝ լեզվին վերաբերող դրույթների բացատրությունը՝ նպատակ հետապնդելով երկարաժամկետ կտրվածքով ուղղություն ցույց տալ Շրջանակային կոնվենցիայի սկզբունքների իրականացումը բարելավելու համար: Այն հասցեագրված է իշխանություններին, որոշում կայացնողներին, փոքրամասնության ներկայացուցիչներին, պետական պաշտոնյաներին, հասարակական կազմակերպություններին, գիտնականներին եւ այլ շահագրգիռ անձանց: Այն ներառում է խորհրդատվություն եւ գործնական առաջարկներ համախմբված հասարակության ձեւավորմանը օժանդակելու համար ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց լեզվական իրավունքների վրա ազդող օրենսդրություն եւ ռազմավարություններ մշակելիս:

95. Փոքրամասնությունների իրավունքները, ինչպես դրանք ձեւակերպված են Շրջանակային կոնվենցիայում եւ հետագա մշակման են ենթարկվել դիտանցման գործընթացի միջոցով, ներառական լեզվական քաղաքականության անհրաժեշտություն են ստեղծում: Սա նշանակում է, որ յուրաքանչյուրն ունի տարբերություններ արտահայտելու իրավունք, եւ որ նման տարբերությունները պետք է ճանաչվեն: Սակայն, նման ճանաչումը պետք է չհանգեցնի արմատավորված ինքնությունների առաջացմանը: Քանի որ լեզուն սերտորեն կապված է գաղափարախոսության եւ հիերարխիկ հարաբերությունների հետ, ուստի ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց դասակարգումը կարող է հանգեցնել սոցիալական փոխհարաբերություններում հավասար կարգավիճակի մերժմանը: Տարբերությունների ճանաչումը պետք է հիմնվի հասարակության բոլոր անդամների լիակատար եւ իրական հավասարության վրա՝ անկախ նրանց ինքնությունից եւ լեզվական պատկանելիությունից: Այսպիսի հավասարության խթանման համար պահանջվում է, որպեսզի ձեռնարկվեն միջոցներ, որոնք կնպաստեն ռեսուրսների եւ իրավունքների հավասար հասանելիությանը՝ անկախ տարբերություններից, եւ հնարավոր կդարձնեն սոցիալական փոխհարաբերությունները տարբեր խմբերի միջեւ:

96. Որպես անհատի իրավունքների գործիք՝ Շրջանակային կոնվենցիան կենտրոնանում է առանձին լեզվակրի եւ նրա իրավունքների ու ազատությունների վրա՝ սոցիալական համատեքստում փոխհարաբերվելիս: Շրջանակային կոնվենցիայի իրականացմանն ուղղված

միջոցառումներում, ուստի, պետք է հաշվի առնել, որ լեզվական պատկանելիությունը հենվում է ազատ ինքնանույնականացման վրա, եւ ոչ ստատիկ է, ոչ էլ բացարձակ: Բացի դրանից, թեւ որոշակի դրույթների թիրախ են հանդիսանում անհատների խմբերը, օրինակ՝ նրանց իրական հավասարությունը խթանելու նպատակով, լեզվական իրավունքների լիարժեք զարգացմանը նպաստող համապարփակ քաղաքականությունները պետք է նաեւ վերաբերեն հասարակությանը՝ որպես մեկ ամբողջություն:

97. Լիակատար եւ իրական հավասարության եւ հանդուրժողականության եւ փոխադարձ հարգանքի վրա հիմնված միջէթնիկ հարաբերությունները խթանելուն վերաբերող ընդհանուր սկզբունքներից բացի, Շրջանակային կոնվենցիան ներառում է հատուկ դրույթների շարք այն ոլորտների վերաբերյալ, որոնք կենտրոնական են մի կողմից՝ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց լեզվական իրավունքներ հավասարակշռված զարգացման, եւ մյուս կողմից՝ տարբեր հասարակությունների առաջխաղացման համար: Սա ներառում է լրատվամիջոցները (հանրային եւ մասնավոր, ավանդական եւ համացանցային), լեզվի գործածությունը՝ անձնական կյանքում եւ հրապարակորեն, կրթությունը եւ գործուն մասնակցությունը: Ուստի, սույն Մեկնաբանությունը վերաբերում է, մասնավորապես, այդ բնագավառներին:

98. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքներն ու ազատությունները երաշխավորելու միջոցով սոցիալական համախմբվածությունը խթանելու ընդհանուր նպատակի իրականացմանը նպաստելու համար լուծումները պետք է համապատասխանեցվեն յուրաքանչյուր ազգային փոքրամասնության դրությանը Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի որոշակի համատեքստում: Մշտական զարգացման պայմաններում Կողմ հանդիսացող պետությունների կողմից ընտրված միջոցները՝ որոշակի հանգամանքներից ելնելով, անպայմանորեն չեն ապահովի Շրջանակային կոնվենցիայի ստանդարտների պահպանում ապագայում: Ուստի, փոքրամասնությունների պատկանող անձանց լեզվական իրավունքների վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն ունեցող քաղաքականությունները, օրենսդրական հիմքերը եւ իրականացման մեխանիզմները պետք է մշտապես դիտանցվեն, գնահատվեն եւ փոփոխվեն՝ համապատասխան խմբերի հետ մանրամասն խորհրդակցությունների արդյունքում: Համապատասխանաբար, Խորհրդատվական կոմիտեն հետագա դիտանցումների փուլերում նույնպես կվերազնահատի լեզվական իրավունքների վրա ազդող պետական միջոցները, եւ հետագա մշակման կենթարկի իր եզրահանգումները: Ինչպես արդեն նշվել է ներածական մասում, Մեկնաբանությունը պետք է դիտվի որպես արդիական գործիք, որի բացատրությունը պետք է մշակվի Շրջանակային կոնվենցիայի դիտանցման գործընթացին զուգահեռ: ***